թանը կարող էր ծածուկ քաջալերել սանձազերծուած բռնութիւնները, այդուհանդերձ, օսմանեան գահակալի նման դիրքորոշումը մեկնաբանում է տերութիւնների կողմից իրեն պարտադրուած բարենորոգումների իրականացմանը միտուած միջոցառումների տապալման ցանկութեամբ: Բացի դրանից, հեղինակը մեծ նշանակութիւն է տալիս սուլթանի՝ բանակը մահմեդականների դէմ դուրս բերելու ցանկութեան բացակայութեանը, թէպէտ ընդունում է զինուորականների մասնակցութիւնը կոտորածներին[45]*:*

Արդիւնքում, Ժէորժէոնը թէեւ փաստում է Աբդուլ Համիդի կարծեցեալ անկարողութիւնը կամ ցանկութեան բացակայութիւնն իրավիճակը կարգաւորելու հարցում, օսմանեան տեղական պաշտօնեաների դերն ու մասնակցութիւնը կոտորածներին, այդուհանդերձ, այս անգամ եւս, թէպէտ փոքր-ինչ քողարկուած ձեւով, ժխտում է հայ ժողովրդի բնաջնջման իրականացումը սուլթանի եւ օսմանեան պետութեան կողմից պետական քաղաքականութեան մակարդակով: Նա կտրականապէս մերժում է այն իրատեսական մեկնաբանութիւնը, ըստ որի կոտորածները «կարգադրուել են եւ նոյնիսկ ծրագրուել» օսմանեան կառավարութեան կողմից, իսկ հիմնաւորելու համար իր տեսակէտը՝ բերում է, մեղմ ասած, ոչ այնքան համոզիչ փաստարկներ, ինչպիսիք են կայսրութեան ոչ բոլոր տարածքներում հայկական կոտորածների սանձազերծումը կամ օսմանեան որոշ տեղական պաշտօնեաների՝ բռնութիւններին հակադրուելու՝ իրականութեանը յիրաւի համապատասխանող փաստերը: Ըստ նրա հիմնական մեկնաբանութիւնների՝ Ժէորժէոնին կարելի է անվարան դասել Հայոց ցեղասպանութեան պատմութեան ժխտողական ուղղութեան աւելի չափաւոր կողմնակիցների շարքը, եթէ առաւել եւս նկատի ունենանք, թէ Օսմանեան կայսրութեան պատմութեան ինչպիսի բանիմաց հեղինակի է վերաբերում խօսքը:

Ինչպէս տեսանք, նրանց մեկնաբանութիւններն ամբողջութեամբ համահունչ են ժխտողական պատմագրութեան ընդհանուր խճանկարին եւ համիդեան կոտորածների մեկնաբանութեան ասպարէզում որեւէ ինքնատիպ հարցադրումներով չեն առանձնանում: Նրանք սոսկ որդեգրել են թէ՛ ԺԹ դարի վերջի եւ Ի դարի սկզբի ֆրանսիացի հայրենակիցների եւ թէ՛ իրենց ժամանակակից այլազգի պատմաբանների՝ միեւնոյն ուղղութեան ներկայացուցիչների հիմնական թեզերը եւ բաւարարուել դրանց վերաշարադրմամբ: Ամէն դէպքում, Հայոց ցեղասպանութեան պատմագրութեան ժխտողական ուղղութեան՝ ֆրանսիական պատմագրութեան ներկայացուցիչների գրչին պատկանող աշխատութիւնների տեսակարար կշիռը ֆրանսիական պատմագիտական մտքի նուաճումների յենքի վրայ, անտարակոյս, նուազ է:

45 Նոյն տեղում, էջ 293-295:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1918 Թ. ՕԳՈՍՏՈՍԻՆ

Աշոտ Հայրունի

Հայաստանի Հանրապետութեան դրութիւնն ինչպէս նախորդ ամիսներին, այնպէս էլ օգոստոսին շարունակում էր մնալ ծայրայեղ ծանր եւ յուսահատական: «Հայաստանը, աւելի շուտ, գաղթականական կայան էր,- գրում էր Սիմոն Վրացեանը:- Ամբողջ երկրում շուրջ 450,000 գաղթական էր թափուած, որից մօտ 40,000-ը Երեւանում, շատերը՝ փողոցների եւ աւերակ շէնքերի մէջ: Հաց չէր ճարւում...: Սարսափելի էր որբերի վիճակը... Մարդիկ մեռնում էին անմռունչ, հարիւրնոցով, հազարներով: Ժողովուրդը սպառւում էր վառուող մոմի պէս: ...Վեց ամսուայ ընթացքում սովից ու հիւանդութիւններից Հայաստանում մեռաւ 180,000 մարդ»[1]*:*

Այդ ծանր իրադրութիւնում Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը շարունակում էր ջանքեր գործադրել Բրեստի պայմանագիրը կեանքի կոչելու՝ սովահարութեան մատնուած հարիւրհազարաւոր հայ փախստականներին իրենց հայրենի բնակավայրերը վերադարձնելու եւ Հանրապետութեան տնտեսաքաղաքական մեկուսացումը վերացնելու համար Գերմանիայի աջակցութիւնն ստանալու նպատակով: Օգոստոսի 2-ին Բեռլինում գտնուող հայկական պատուիրակութիւնը օգնութեան մի գրաւոր խնդրագրի հետ միասին գերմանական արտգործնախարարութեանը ներկայացրեց քաղուածքներ Կոստանդնուպոլսում գտնուող հայկական պատուիրակութիւնից ստացուած տեղեկագրերից, որոնք ահազանգում էին բազմահազար հայ փախստականների ծայրայեղ ծանր դրութիւնը եւ թուրքական զօրամասերի ու թաթարական հրոսակների կողմից հայերի հանդէպ իրագործուող բռնութիւնների շարունակական աճը: Այդ քաղուածքներում ընդգրկուած էր նաեւ հետեւեալ հատուածը Հայոց ազգային խորհրդի նախագահ Աւետիս Ահարոնեանի՝ յուլիսի 20-ի նամակից. «Դուք այդտեղ չէք կարող պատկերացնել, թէ ինչպիսի ահռելի չափերի է հասել մեր ազգի փախուստը, եւ որքան սոսկալի է դրանից առաջ՝ եկած թշուառութիւնը: Երեւանից մինչեւ Դիլիջան եւ Նոր Բայազէդ ճանապարհներին փախստականների մի ամբողջ ծով է: Թիֆլիսի եւ Վլադիկավկազի միջեւ գտնուող ռազմական ճանապարհը լեփ-լեցուն է փախչող հայերով: Ախալքալաքի 80,000 հայերը խռնուած են Բակուրիանիի կիրճերում՝ մատնուած օտար իշխանութիւնների պաշտօնական եւ ոչ պաշտօնական կամայականութիւններին: Ղարաքիլիսայի հովիտները լի են փախստականներով: Այնտեղ են գտնուում Կարսի եւ Ալեքսանդրապոլի շրջանների բոլոր հայ բնակիչները: Քաաշի եւ Բորչալուի թաթարները, ոգեւորուած թուրքական զօրամասերի ներկայութիւնից, նրանց անմարդկային կոտորածների են ենթարկել: Նրանք միայն Ղարաքիլիսայի շրջանում սպանել են 2000 հայերի: Աշագաղերաիլի կայարանում հայ որբերը, որոնցով շատ վագոններ լի էին, իրենց ուսուցչուհիների հետ միասին սպանդի են ենթարկուել: Առհասարակ Ղարաքիլիսայից մինչեւ Թիֆլիս ձգուող երկաթուղագիծը մեր ազգի կառափնայարն է դարձել: Փախստականների բազմութիւնը, որը թուով կէս միլիոնից աւելի է, զրկանքների եւ թշուառութեան մէջ մա-

1 Վրացեան Ս., *Հայաստանի Հանրապետութիւն*, Երեւան, 1993, էջ 199-200:

© National Library of Armenia

հուանջաժին է դառնում ամէն օր ու ամէն ժամ: Եթէ շատ շուտով մեր տարածքը մինչեւ Բրեստի սահմանը չազատուի, մեր ժողովուրդը կորած է...»[2]:

Պատուիրակութեան կողմից ԱԳՆ ներկայացուած միւս քաղուածքը կատարուած էր ՀՀ արտգործնախարար Ալեքսանդր Խատիսեանի՝ յուլիսի 23-ի նամակից: Այնտեղ նշուած էր, որ Թուրքական կառավարութիւնը փախստականների առնչութեամբ ՀՀ կառավարութեան ուղարկած նոտային դեռ չէր պատասխանել, չնայած խոստացել էր հարցը երեք օրում քննել: Նաեւ տեղեկացուում էր, որ Թուրքական զօրքերն իրենց շատ անվայելուչ էին պահում եւ յաճախ հէնց իրենք էին Ղարաքիլիսայում, Լոռիում, Ախալքալաքում ու այլ վայրերում հայերի կոտորածներ իրականացնում, որի հետեւանքով Լոռիից փախստականների զանգուածները լեռներով գնում էին Դիլիջան, իսկ այնտեղից Նոր Բայազէդ ու Երեւան: Միաժամանակ նշուում էր, որ Թուրքերը Ղազախից թաթարներին տեղափոխում էին Կարսի շրջան՝ փախուստի մէջ գտնուող հայերի բնակավայրերում վերաբնակեցնելու համար[3]:

Օգոստոսի 5-ին Բեռլինի հայկական պատուիրակութեան նախագահ Համո Օհանջանեանը գերմանական ԱԳՆ պետքարտուղարին ներկայացրեց եւս մի ընդարձակ ուղերձ, որտեղ դարձեալ ուշադրութիւն էր հրաւիրուում հայութեան ծանր դրութեան վրայ, եւ միաժամանակ կատարուում էին առաջարկներ, որոնց իրագործման դէպքում հայերը վերջնական կործանումից կը փրկուէին: Ուղերձում վերստին մատնանշուում էր, որ հայ ժողովրդին համաշխարհային պատմութեան մէջ աննախադէպ փորձութիւններ վիճակուեցին, եւ Թուրքիայի մօտ 2 միլիոն հայերից կենդանի էր մնացել հազիւ կէս միլիոնը: Օսմանեան կայսրութեան հայերի բնաջնջման ընդհանուր սահմռկեցուցիչ պատկերի ներկայացումից յետոյ անդրադարձ էր կատարուում այն ծանր կացութեանը, որում գտնուում էին Կովկասի հայերը: Նշուում էր, որ Բրեստի պայմանագրի ստորագրման ժամանակ հայերն ակնկալում էին, որ դրանով որոշակիօրէն կը հատուցուէին հայ ժողովրդի հանդէպ իրագործուած ոճրագործութիւնները, եւ կը բացառուէր արդէն տեղի ունեցած անլուր սարսափների որեւէ կրկնութիւն, մինչդեռ պայմանագիրը, հայերից նրանց հայրենիքի մեծագոյն մասը խլելով հանդերձ, չկասեցրեց Թուրքերի հետագայ առաջխաղացումը, որոնք գրաւեցին նաեւ Կովկասեան Հայաստանի կէսից աւելին, իսկ այդ տարածքների աւելի քան 600,000 հայերը բնաջնջումից փրկուելու համար փախստական էին դարձել՝ իրենց ունեցուածքը մատնելով Թուրքական կողոպուտին: «Հայ փախստականների հոսքը եւ նրանց մէջ մահացութիւնը օրէցօր աճում են,- նշուած էր ուղերձում,- հայերի սպանութիւններն ու կողոպտումը մեծ չափերով աճում են: Մահմեդական բանդաները, քաջալերուած

2 *Deutschland und Armenien 1914-1918,* Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919, էջ 417-418:

3 Նոյն տեղում, էջ 418: Արտգործնախարարութեանը յանձնուած՝ թուով երրորդ քաղուածքը ներկայացնում էր Կոստանդնուպոլսում գտնուող հայկական պատուիրակութեան քարտուղար Քոչարեանի՝ յուլիսի 20-ի տեղեկութիւնն այն մասին, որ դէպի Բաքու եւ Երեւան երթեւեկութիւնը դեռ վերականգնուած չէր: Հաստատուած էր այն փաստը, որ Ծիրակի դաշտավայրից բազմաթիւ հայեր կալանաւորուել եւ ուղարկուել էին Թուրքիա: Թուրքերը Ելիզաւետպոլում գտնուող հայերից խլել էին նրանց զէնքը, իսկ Վլադիկավկազ տանող զինուորական ճանապարհը արգելափակուած էր: Աւազակների հրոսակները շարունակում էին աւարառութիւնը Ախալքալաքի շրջանում, որի բնակչութիւնը դեռ վերադարձի հնարաւորութիւն չունէր: Աւելի քան 600,000-ի հասնող փախստական հայերի մէջ իրենց հունձն էին կատարում սովը եւ համաճարակները: Միաժամանակ նշուում էր, որ հայերը Բաքուից հեռացնում էին իրենց ընտանիքները:

թուրքերի ներկայութիւնից, անարգել իրագործում են իրենց անկարգութիւնները: Մեր ժողովրդի վերջին մնացորդը, մի ազգի, որը հարիւրամեակներ ի վեր Ասիայի դարպասների մօտ ներկայացրել է քրիստոնէական կրօնն ու եւրոպական մշակոյթը, դատապարտուած է կործանման, եթէ նրան շատ շուտով օգնութիւն չցուցաբերուի: Օգնել կարող է միայն Գերմանիան: Այն բանից յետոյ, երբ կովկասեան Հայաստանը հռչակել է իր պետական անկախութիւնը, նա օգնութեան ակնկալիքով եւ վստահութեամբ լի դիմում է հզօր Գերմանիային եւ խնդրում է պաշտպանական միջամտութիւն՝ Թուրքիային Բրեստի պայմանագրի պայմանները յարգել տալու, այդ կերպ կովկասեան հայերին Թուրքիայի իրենց հայրենակիցներին վիճակուած ճակատագրից փրկելու եւ նոր հայկական պետութեանը գոյատեւման ու անարգել զարգացման հնարաւորութիւն ընձեռելու համար»:[4]

Ուղերձում չորս կէտերով ներկայացուում էին նաեւ այն միջոցառումները, որոնց շուտափոյթ գործադրումը կը յանգեցրնէր հարցի որոշակի կարգաւորման: Նախ անհրաժեշտ էր համարուում զօրամասեր ուղարկել Հայաստան՝ հայերին նոր յարձակումներից ու կոտորածներից պաշտպանելու, հայ փախստականներին իրենց հայրենի բնակավայրերը վերադարձնելու, ինչպէս նաեւ Թուրքերից հայկական տարածքների պատշաճ ազատումն ապահովելու եւ վերահսկելու համար: Երախտագիտօրէն անդրադառնալով գերմանական ԱԳՆ այն տեղեկութեանը, որ Գերմանիան Թուրքական կողմին դրդել էր փախստականների վերադարձի դէմ իր մերժողական կեցուածքից հրաժարուել, պատուիրակութիւնն ուղերձում միաժամանակ ընդգծում էր, որ հայերը ոչ մի կերպ չէին համաձայնի վերադառնալ Թուրքական ազդեցութեան շրջանները, քանի դեռ նրանց անվտանգութիւնը երաշխաւորուած չէր լինի: Քանի որ դա, ըստ ուղերձի հեղինակների, միայն գերմանական կամ աւստրո-հունգարական զօրամասերի առկայութեան դէպքում կարող էր իրականութիւն դառնալ, նրանք թախանձագին խնդրում էին հնարաւորինս շուտ զօրամասեր ուղարկել՝ նշելով, որ իւրաքանչիւր օր «անչափելի արեան հեղում» եւ նմանապէս «անչափելի ունեցուածքի կորուստ» էր նշանակում:

Ուղերձում մատնանշուող յաջորդ հրատապ միջոցառումը պէտք է լինէր մայրաքաղաք Երեւանում գերմանական դիւանագիտական ներկայացուցչի նշանակումը, որի ներկայութիւնը Թուրքական շրջաններում հայկական կողմի դիրքորոշումը շատ ազդեցիկ կը դարձնէր: Հանրապետութեան կառավարութիւնը խիստ ցանկալի էր համարում նաեւ գերմանական առեւտրական մի յանձնաժողովի կամ առեւտրական ներկայացուցչի առաքումը Հայաստան՝ յայտնելով իր պատրաստակամութիւնը Գերմանիային բամբակ եւ պղինձ մատակարարելու հարցում: Երրորդ կէտում մատնանշուում էր հայկական տարածքներից Թուրքական զօրքերի դուրսբերման եւ Բրեստի պայմանագրով հաստատագրուած սահմանների վերականգնման անհրաժեշտութիւնը եւ զուգահեռաբար տեղեկացուում էր, որ քանի դեռ Թուրքերը գրաւուած էին պահում հայկական տարածքները, խօսք լինել չէր կարող անդորրի, կարգ ու կանոնի հաստատման, ինչպէս նաեւ տնտեսական գործունէութեան ապահովութեան մասին, իսկ հայկական հանրապետութիւնը պետականութեան կառուցման ու ամրապնդման իր խնդիրների իրագործման համար համապատասխան ազատութիւն եւ հնարաւորութիւններ չէր ունենայ: Եւ վերջապէս,

4 *Die Armenische Frage und der Genozid an den Armeniern,*- Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan, Jerewan 2004, էջ 568:

© National Library of Armenia

թուարկուող միջոցառումների վերջին՝ չորրորդ կէտում ընդգծւում էր Գերմանիայի կողմից ՀՀ պետական անկախութեան ճանաչման անհրաժեշտութիւնը, ինչը արուել էր Թուրքիայի կողմից:[5]

Վերոնշեալ երկրորդ կէտի՝ Երեւանում Գերմանիայի ներկայացուցչի նշանակման առնչութեամբ պատուիրակութիւնը օգոստոսի 6-ին գերմանական Ա.Գ.Ն. ներկայացրեց նաեւ մի առանձին խնդրագիր, որտեղ մասնաւորապէս նշւում էր, որ Հայաստանի կառավարութիւնն իր նստավայրը Երեւան փոխադրելուց յետոյ պատուիրակութեանը յանձնարարել է խնդրել, որ Գերմանիան Երեւանում դիւանագիտական ներկայացուցիչ նշանակի, ինչպէս այդ տեղի էր ունեցել Թիֆլիսում: Ընդգծւում էր, որ նրա ներկայութիւնը ոչ միայն Թուրքերի մօտ հայկական կողմի դիրքորոշումը խիստ ազդեցիկ կը դարձնէր, այլեւ Գերմանիայի համար կը դիւրացնէր Հայաստանի իրադրութեան վերաբերեալ տեղեկութեան ստացումը, կը նպաստէր երթեւեկութեան կանոնաւորմանը եւ հումքի ձեռքբերմանը: Խնդրագրում վերստին հաւաստւում էր, որ հանրապետութեան կառավարութիւնն արդէն իսկ ի վիճակի էր Գերմանիային ու նրա դաշնակիցներին բամբակ եւ պղինձ մատակարարել, եւ որ Կոստանդնուպոլսի հայկական պատուիրակութիւնն իր հերթին պատրաստակամութիւն էր յայտնել այնտեղի գերմանական դեսպանին այդ մասին ընդարձակ տեղեկութիւններ ու փաստաթղթեր տրամադրել, եթէ պաշտօնական Գերմանիան նրան հրահանգէր զբաղուել այդ հարցով:[6]

Գերմանական թէ՛ քաղաքական եւ թէ՛ բարձրաստիճան զինուորական շրջաններն, անշուշտ, որոշակիօրէն դէմ էին Կովկասում Թուրքիայի ինքնիշխան քաղաքականութեանը եւ միւս կողմից հաստ էին այն բարդութիւններին, որոնք Թուրքական կառավարութեան հայասպանդ քաղաքականութեան հետեւանքով կարող էին ի յայտ գալ ապագայ խաղաղութեան բանակցագործընթացում: Դեռ նախորդ ամիսներին գերմանական զինուորական հրամանատարութիւնը, Թուրքական կառավարութեանը նախազգուշացնելով Կովկասում Թուրքական զօրքերի առաջխաղացման եւ Թուրքական հայասպանդ քաղաքականութեան հնարաւոր հետեւանքներից՝ կոչ էր անում ճանաչել Բրեստի պայմանագրով հաստատագրուած սահմանները: Իսկ առանձին բարձրաստիճան զինուորականներ, ինչպէս օրինակ գեներալ ֆոն Լոսովը, գեներալ ֆոն Կրեսը եւ այլն, հետեւողականօրէն պաշտպանում էին Թուրքիայի վրայ ազդու ճնշում գործադրելու միջոցով նրան Կովկասից դուրս մղելու տեսակէտը: Թուրքական կողմն իր հերթին իր գործողութիւններն արդարացնելու համար որդեգրել էր զանազան ստայօդ «հիմնաւորումների», իսկ եթէ առանձին հարցերում դրանք եւս բացակայում էին, ապա առերես դաշնակցի պահանջների հետ համաձայնելու, բայց անվերջ ձգձգումներով ձախողելու մարտավարութիւնը: Հայկական խնդրի շուրջ երկու դաշնակիցների երկխօսութիւնը նոյն ուղեգիծն ունէր նաեւ օգոստոսի առաջին օրերին:

Գերմանական բանակի գլխաւոր հրամանատար, ֆելդմարշալ ֆոն Հինդենբուրգը, որը յուլիսի 30-ին Էնվերին դարձեալ մի հեռագիր էր ուղարկել՝ կոչ անելով փախստական հայերին անյապաղ վերադարձի հնարաւորութիւն տալ, յուլիսի 31-ին գեներալ ֆոն Զեկտի միջոցով եւս մի հեռագիր ուղարկեց նրան, որտեղ տեղեկացնում էր, որ Զուլֆայի ուղղութեամբ Թուրքական դիւիզիաների տեղաշարժերի վերաբերեալ տեղեկութիւններով հաստատւում էր, որ այդ շրջաններում հայերի հետ մարտեր էին տեղի ունենում: «Ես մեծ քաղաքական եւ նմանապէս մեծ ռազմա-

5 Նոյն տեղում, էջ 569:

6 Նոյն տեղում, էջ 569-570:

կան սխալ կը համարեմ,- նշում էր նա,- եթէ այդ մարտերը ռազմական տեսանկիւնից անպայմանօրէն անհրաժեշտ չափը գերազանցեն: Մենք ռազմական տեսակէտից նոյնպէս չենք կարող անտեսել այն մտահոգիչ տրամադրութիւնը, որն այդ մարտերի ընթացքում բնակիչների դէմ անկարգութիւնների հետեւանքով Անդրկովկասում ի յայտ կը գայ»:[7]

Շուտով՝ օգոստոսի 3-ին, Կոստանդնուպոլսի գերմանական դեսպան Բեռնշտորֆը Հինդենբուրգին ուղարկեց Էնվերի գրաւոր պատասխանը: Վերջինս այնտեղ նշում էր, թէ ինքը հայ փախստականների հարցով զբաղուող Թուրքական արտաքին գործերի նախարարութեանը տեղեկացրել էր, որ «ռազմական տեսանկիւնից» կարող էր ընդունելի համարել փախստականների վերադարձը դէպի Ալեքսանդրապոլ-Զուլֆա երկաթգծից առնուազն 20 կմ հեռաւորութեան վրայ ընկած տարածքը, ինչպէս նաեւ այն շրջանները, որտեղ մուսուլմանների եւ հայերի միջեւ մարտեր տեղի չէին ունեցել, ընդ որում՝ յատկանշական է, որ նա այդ տարածքներից չեշտում էր մասնաւորապէս Բաթումի շրջանը: Էնվերը, այնուամենայնիւ, նշում էր, որ այդ մասին որոշում պէտք է կայացնէր 3-րդ բանակի գլխաւոր հրամանատարը: Ինքն անձամբ դեռ չէր կարող նաեւ որոշակիօրէն ասել, թէ արտգործնախարարութիւնը փախստականներին վերադարձի համար համապատասխան թոյլտւութիւն կը յատկացնէր, թէ ոչ, սակայն չէր թերանայ հարցի կարգաւորումն արագացնել եւ արդիւնքների մասին տեղեկացնել ֆելդմարշալին:

Զուտ Թուրքական այս պատասխանը համեմուած էր նաեւ մի ամբողջ շարք ապակողմնորոշիչ տեղեկութիւններով, որոնցով ռազմական նախարարը փորձում էր «հիմնաւորել» հայ փախստականների զանգուածային վերադարձի անհնարինութիւնը եւ Թուրքական կողմի հակահայկական գործողութիւնները: «Ես,- գրում էր Էնվերը,- լիովին կիսելով Ձերդ Գերազանցութեան մտահոգութիւնները եւ համակուած Ձերդ Գերազանցութեան ցանկութիւններն իրագործելու մեծ բաղձանքով՝ ի ցաւ ինձ, ստիպողական ռազմական պատճառներով ի վիճակի չեմ թոյլատրել հայերի վերադարձը ամբողջ ծաւալով եւ առանց սահմանափակումների: Ես խնդրում եմ այդ հարցի քննութեան ժամանակ նկատի առնել հայերի հանդէպ մեր դրութիւնը: Բաքուի առջեւ, Զուլֆայի եւ Ուրմիայի մօտ նրանք մեր դէմ մարտեր են մղում: Նրանց կապը անգլիացիների հետ ապացուցելի է: Այս դէպքում ժողովրդի եւ ռազմական հակառակորդի միջեւ որեւէ սահմանաբաժանում կատարելը հազիւ թէ հնարաւոր է, չնայած սկզբունքօրէն բնակչութեան դէմ պատերազմ չմղելու մեր ողջ պատրաստակամութեանը: Ձերդ Գերազանցութիւնը ինձնից պահանջում է կէս միլիոն մասամբ զինուած եւ թշնամաբար տրամադրուած բնակիչներին թոյլատրել անցնելու մեր կուռող բանակի թիկունքը, երբ որեւէ երաշխիք չի կարող տրուել, որ նրանք խաղաղ պահուածք կը ցուցաբերեն: Նրանք, այնուհանդերձ, ինչպէս նախկինում ռուսական, այնպէս էլ այժմ անգլիական վարձատրութեամբ դժուարութիւններ կը ստեղծեն մեր պատերազմական գործողութիւնների համար: Վերադառնալով այն շրջանները, որոնք հարիւրամեակներ շարունակ տակնուվրայ են եղել հին ազգային ատելութեան կողմից, նրանք նոր արիւնոտ կռիւների առիթ կը ստեղծեն: Ձերդ Գերազանցութեանը կը խնդրէի նկատի առնել, որ վերջին մարդահամարից յետոյ միայն Կարսի շրջանում մուսուլման բնակիչների թիւը կրճատուել է 45,000-ով, որոնք բոլորը զոհ են դարձել հայերի հետապնդումներին, քանի որ այդ շրջանում ռուսական զօրակոչ տեղի չի ունեցել: Այդ շրջանների մուսուլմանական ժողովուրդը անխուսափելիօ-

7 *Deutschland und Armenien 1914-1918...*, էջ 416:

© National Library of Armenia

րէն կը ձգտի վրէժխնդիր լինել, այնպէս, որ թուրքական զօրքերը ստիպուած կը լինեն հայերին պաշտպանելու համար հանդէս գալ իրենց ազգակիցների ու հաւատակիցների դէմ: Հէնց ի սէր մարդկայնութեան անհրաժեշտ է խուսափել մի նոր քաղաքացիական պատերազմից, որ կ'ունենայ անխուսափելի դաժան հետեւանքներ: Հայերի վերադարձը կը հարկադրի երկրի ներսում գնդերի վերաբաշխում կատարել, ինչը ծրագրուած ռազմական գործողութիւնները անհնար կը դարձնի եւ մեր պատերազմավարումը կը ջլատի: Զերդ Գերազանցութեանը ես խնդրում եմ մեր դիրքորոշումը գնահատելիս այդ հանգամանքները արժեւորել: Եթէ անմիջաբար կամ գեներալ ֆոն Կրեսի միջնորդութեամբ պահանջւում է Բաքուից հայերի հեռանալը եւ նրանց վերադարձը հայկական պետութեան տարածք, ապա Ադրբեջանում ղեկավարող թուրքական հրամանատարի կողմից խոչընդոտներ չեն յարուցուի: Բաքուից նրանց հեռանալը մեզ համար միայն ցանկալի կարող է լինել, քանի որ այնտեղի ռուսների հետ համաձայնութեան հասնելը աւելի կը հեշտանայ, եթէ այնտեղ նրանց վրայ ակնյայտօրէն տիրող ազդեցութիւնը դրան չխանգարի»[8]:

Էնվերի պատասխանը ընդարձակ մեկնաբանութեան կարիք, անկասկած, չունի: Նա փորձում էր գործադրել յերիւրանքների մի ամբողջ զինանոց՝ հայերի առնչութեամբ իր գերմանական դաշնակցի պահանջները չկատարելու եւ միաժամանակ նրա մօտ եւս հակահայկական տրամադրութիւն ձեւաւորելու համար, եւ չէր խուսափում մինչեւ իսկ Բաքուի ռուսների հետ փոխըմբռնման անհնարինութիւնը պայմանաւորել նրանց վրայ՝ այնտեղ գտնուող հայերի ունեցած ազդեցութեամբ: Իսկ առանձին շրջաններում հայերի վերադարձը թոյլատրելու՝ Էնվերի առերեւոյթ համաձայնութիւնը նպատակ ունէր այն պատրանքը ստեղծել, թէ նա սկզբունքօրէն դէմ չէր հայերի զանգուածային վերադարձին, սակայն դա պատերազմական իրադրութեան պայմաններում անհնար էր[9]: Մինչդեռ, ինչպէս շուտով պարզ կը դառնայ, թուրքական կառավարութեան կողմից սկզբունքօրէն արգելւում էր նաեւ վերոնշեալ՝ առանձին շրջաններ հայերի վերադարձը:

Ինչեւէ, Բեռլինի հայկական պատուիրակութիւնը, բնականաբար, իր խնդիրն էր համարում նաեւ թուրքական այդ ապակողմնորոշիչ «փաստարկների» մերկացումն ու պարզաբանումը: Բացառապէս այդ հարցին էր վերաբերում օգոստոսի 8-ին արտգործնախարարութեանը ներկայացուած ուղերձը, որտեղ մասնաւորապէս նշւում էր, որ հայկական կառավարութիւնը երբեք չէր առաջարկել թուրքական զօրք ուղարկել հայկական «բանդաների» դէմ պայքարելու համար, եւ որ այս հարցում խօսքը կարող էր վերաբերել միայն աննշան խմբերի, որոնք թուրքական զօրքերի ներկայութեան անհրաժեշտութիւն ամենեւին չէին ստեղծում, եւ որոնց հետ կարող էին նաեւ հայկական կանոնաւոր զինուած ուժերը հաշիւ մաքրել, եթէ նրանց տրուէր շարժման բաւականաչափ ազատութիւն, եւ թուրքերի կողմից չարգելուէր հայկական երկաթուղու օգտագործումը: Նշելով, որ կառավարութիւնը Երեւան տեղափոխուելուց յետոյ անհամեմատ աւելի մեծ հնարաւորութիւններ ունէր երկրում առանց օտարների օգնութեան պահպանել կարգ ու կանոնը՝ պատուիրակութիւնը միաժամանակ ընդգծում էր բազմաթիւ փաստերի առկայութիւնն այն մասին, որ թուրքերը մահմեդական բանդաների դէմ ոչ միայն չէին պայքարում, այլեւ նրանց ամէն հնարաւոր ձեւով աջակցում էին: Մինչդեռ, եթէ մի քանի հարիւր մարդուց բաղկացած մի քանի գերմանական պարեկային խմբեր ուղարկէին, ապա նրանք, խաղաղութիւնը խախտող քրիստոնեաների եւ մահմեդականների դէմ հաւասարաչափ խստութիւն կիրառելով եւ զերծ լինելով թուրքերին յարձակում կը կարողանային ողջ հայկական տարածքը մաքրել բանդաներից:

Ինչ վերաբերում էր Ուրմիայի շրջանին, ապա, ինչպէս տեղեկացւում էր ուղերձում, մի շարք հայեր եւ ասորիներ պարսկական սահմանով փախել էին այնտեղ: Նրանք ի վիճակի չէին սպառնալ թուրքական զօրքերի անվտանգութեանը եւ նաեւ աջակցութիւն ստանալ անգլիացիներից, քանի որ վերջիններս հարիւրաւոր կիլոմետրեր հեռու՝ Մոսուլի մօտ էին գտնւում: Միաժամանակ նշւում էր, որ Բաթումի բանակցութիւնների ժամանակ հայկական կողմը պատրաստակամութիւն էր յայտնել մի յանձնաժողով ուղարկել Ուրմիա՝ այնտեղի հայ փախստականներին Կովկաս բերելու համար, բայց թուրքերը ո՛չ յանձնաժողովին եւ ո՛չ էլ փախստականներին թոյլ չէին տուել օգտագործել երկաթուղին: Իսկ Բաքուի առնչութեամբ տեղեկացւում էր, որ ռուսական արեւմտեան ճակատի լուծարումից յետոյ հայ զինուորները նոյնպէս վերադարձել էին հայրենիք: Նրանցից մօտ 5-6 հազարը ընտրել էին Բաքուով տանող ճանապարհը, սակայն նրանց հետագայ ուղին դէպի Թիֆլիս եւ Հայաստան դարձել էր անհնար, քանի որ թաթարները Բաքու-Թիֆլիս ճանապարհահատուածը գրաւել էին եւ սպանում էին իւրաքանչիւր հայի, ով կը կամենար այն հատել: Այդ իսկ պատճառով հայ զինուորները դարձեալ Բաքու էին վերադարձել եւ միացել բոլշեւիկներին, որոնք նրանց խոստացել էին օգնել վերադառնալ իրենց հայրենիք: Միաժամանակ ուղերձում նշւում էր, որ Բաքուն գտնւում էր բոլշեւիկների ձեռքում, եւ այնտեղի իրադարձութիւնների համար նրանք էին պատասխանատու, այլ ոչ թէ հայերը կամ Հայաստանի կառավարութիւնը, որը սեփական նախաձեռնութեամբ արդէն երկու հոգու ուղարկել էր Բաքու՝ այնտեղ գտնուող հայ զինուորների վերադարձը կազմակերպելու համար, բայց թուրքերը Քուրդամիրի մօտ նրանց չէին թոյլատրել շարունակել ճանապարհը, եւ նրանք ձեռնունայն վերադարձել էին Թիֆլիս: Ուշագրաւ էր նաեւ ուղերձում կատարուած այն հաւաստումը, որ բոլշեւիկների հետ հայերի համագործակցութիւնն անհամեմատ նուազ եւ աննշան չափեր կ'ունենար, եթէ հայ զինուորներին թոյլատրուէր վերադառնալ հայրենիք[10]:

Հայաստանի կառավարութիւնը, փաստօրէն, իր պատուիրակութիւնների միջոցով շարունակում էր գործադրել բոլոր հնարաւորութիւնները՝ ծայրայեղ ծանր իրադրութիւնը յաղթահարելու համար գերմանական կառավարութեան աջակցութիւնը ստանալու նպատակով: Գերմանական արտգործնախարարութեանը տրամադրւում էին մանրազնին ստոյգ տեղեկութիւններ տիրող իրադրութեան վերաբերեալ, կատարւում էին բաւական հնարամիտ հիմնաւորումներ գերմանական կողմին աջակցութեան մղելու նպատակով: Միաժամանակ զգալի բացատրական աշ-

---

8 Նոյն տեղում, էջ 418-420:

9 Նրա այս հեռագիրը, սակայն, աներկբայ լաւատեսութեամբ էր համակել գերմանական կողմին, ինչը վկայում էր պետքարտուղար Հինթցէի՝ օգոստոսի 4-ին գեներալ ֆոն Կրեսին ուղարկած հաղորդագրութիւնը: Ըստ պետքարտուղարի հաւաստիացման՝ թուրքական կառավարութիւնը գերմանական կառավարութեան եւ բանակի գլխաւոր հրամանատարութեան կողմից «պաշտպանուած բազմաթիւ քայլերի հիման վրայ» պատրաստակամութիւն էր յայտնել անմիջապէս ձեռնամուխ լինել հայ փախստականներին հայրենիք վերադարձնելու գործին: Հինթցէն նաեւ նշում էր, որ այդ հարցում ռազմական նկատառումներով, մինչեւ կովկասեան հարցերին նուիրուած համաժողովի հրաւիրումը, բացառութիւն էր կազմելու միայն Ախալքալաքի շրջանը (տե՛ս նոյն տեղում, էջ 420):

10 *Die Armenische Frage...*, էջ 570-572:

© National Library of Armenia

խատ՝անք էր տալուում՝ գերմանական կառավարութեանը թուրքական ապակողմնորոշիչ տեղեկատուութեան ազդեցութիւնից զերծ պահելու համար: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ այդ հարցում հայկական կողմը բացարձակապէս միայնակ չէր եւ, մասնաւորապէս, ի դէմս Թիֆլիսում Գերմանիայի պաշտօնական ներկայացուցիչ գեներալ Ֆոն Կրեսի, ունէր գործուն եւ եռանդուն աջակից:

Ֆոն Կրեսը յուլիսի 30-ին բարոն Ֆրանկենշտայնի եւ իր շտաբի մի շարք աշխատողների հետ Թիֆլիսից Ալեքսանդրապոլով մեկնեց Երեւան, նաեւ Էջմիածին[11]՝ հանդիպումներ ունենալով ինչպէս կառավարութեան, այնպէս էլ կաթողիկոսի հետ[12]: Նա եւ իր պատուիրակութիւնը նաեւ հրաւէր ստացան մասնակցելու օգոստոսի 1-ին Երեւանում պառլամենտի բացման հանդիսաւոր արարողութեանը: Ֆոն Կրեսը, սակայն, նպատակայարմար գտաւ հրաժարուել անձամբ այդ արարողութեանը մասնակցելուց, քանի որ, չնայած հայերի համար Գերմանիայի օգնութիւնն ապահովելու նրա գործադրած բոլոր հետեւողական ջանքերին, դրանք դեռ էական արդիւնքներ չէին տուել, եւ նա իրաւացիօրէն այն մտավախութիւնն ունէր, որ իր մասնակցութիւնը հայերի մէջ անիրագործելի յոյսեր կ՚արթնացնէր Գերմանիայի աջակցութեան վերաբերեալ: Բացի այդ, Ադրբեջանի եւ Վրաստանի միջեւ ստեղծուած նոր լարուածութիւնը նոյնպէս նրան հարկադրում էր շուտափոյթ վերադառնալ, ուստի նա եւ իր պատուիրակութեան անդամները, բացառութեամբ բարոն Ֆրանկենշտայնի, որն այդ օրը արարողութեանը մասնակցելու համար մնաց Երեւանում, յուլիսի 31-ի երեկոյեան վերադարձան Թիֆլիս:[13]

11 Ֆոն Կրեսը, ինչպէս հաղորդւում էր նրա՝ օգոստոսի 5-ի տեղեկագրում, Երեւան էր մեկնել Հայաստանի կառավարութեանը ներկայանալու պաշտօնական նպատակով:

12 Էսադ փաշան, իր նախնական յանձնառութեան համաձայն, հոգ էր տարել, որ նրանք առանց որեւէ բարդութեան անցնէին թուրքերի կողմից գրաւուած տարածքով: Յուլիսի 30-ի երեկոյեան, երբ նրանք հասան Երեւան, քաղաքագլխի կողմից հրաւիրուեցին ճաշի: Յաջորդ օրը առաւօտեան հանդիպումներ ունեցան նախարարների եւ Ազգային խորհրդի նախագահի հետ, իսկ այնուհետեւ մեկնեցին Էջմիածին, որտեղ նրանց ընդունեց կաթողիկոսը: Կէսօրից փոքր-ինչ անց վարչապետն ու Ազգային խորհրդի նախագահը նրանց հետ բաւական երկարատեւ գաղտնի զրոյց ունեցան, այնուհետեւ ի պատիւ հիւրերի հանրապետութեան բարձրաստիճան անձանց մասնակցութեամբ կազմակերպուեց ճաշկերոյթ, որից յետոյ, նոյն օրը երեկոյեան նրանք, բացառութեամբ բարոն Ֆրանկենշտայնի, վերադարձան Թիֆլիս (տե՛ս *Deutschland und Armenien 1914-1918...*, էջ 423):

13 «Ես չկարողացայ Երեւանում իմ մնալը երկարաձգելու որոշում կայացնել,- գրում էր այդ առթիւ գեներալը,- քանի որ մի կողմից Ադրբեջանի եւ Վրաստանի միջեւ ներկայումս գոյութիւն ունեցող լարուածութիւնը շատ ցանկալի էր դարձնում իմ շուտափոյթ վերադարձը Թիֆլիս, եւ միւս կողմից, քանի որ ես երկիւղ էի կրում, որ պառլամենտի բացման կարեւոր միջոցառմանը իմ մասնակցութիւնը հայերի մօտ Գերմանիայի աջակցութեան՝ ոչ իրագործելի յոյսեր կ՚արթնացնէր: Եթէ ես նոյնիսկ Բեռլինից վերադարձած հայ պատուիրակներից որոշ բաներ լսել եմ հայկական հարցի վերաբերեալ արտգործնախարարութեան դիրքորոշման մասին, սակայն այնքան քիչ իրազեկութիւն ունեմ գերմանական կառավարութեան մտադրութիւնների մասին, որ անհրաժեշտ համարեցի զգուշաւորութիւն ցուցաբերել» (տե՛ս *Deutschland und Armenien 1914-1918...*, էջ 423): Ինչ վերաբերում է բարոն Ֆրանկենշտայնին, ապա նա, արարողութիւնից յետոյ վերադառնալով Թիֆլիս, այդ մասին մի զեկուցագիր պատրաստեց եւ այն օգոստոսի 4-ին ուղարկեց Աւստրո-Հունգարիայի արտգործնախարար իշխան Ստեֆան Բուրիանին (տե՛ս նոյն տեղում, էջ 421-422): Այն հանգամանքը, որ զեկուցագիրն ուղարկուեց ոչ թէ գերմանական, այլ աւստրո-հունգարական կառավարութեանը, ամենայն հաւանականութեամբ, թելադրուած էր այն հեռանկարով, որ Հայաստանի Հանրապետութիւնը կարող էր դառնալ Աւստրո-Հունգարիայի ազդեցութեան գօտի՝ ստանալով նրա պաշտպանութիւնը:

Վերադարձից յետոյ, դեռ նախքան իր հիմնական տեղեկագրի պատրաստումը, գեներալը օգոստոսի 4-ին կանցլեր իշխան Ֆոն Հերտլինգին ուղարկեց մի հեռագիր, որտեղ միանշանակօրէն հերքելով փախստականների անվերապահ վերադարձի վերաբերեալ Էնվերի պատճառաբանութիւնները, միաժամանակ ընդգծում էր, թէ իր այցելութիւնը, դիտարկումներն ու զրոյցները կրկին փաստում էին, որ միայն կենտրոնական տերութիւնների շուտափոյթ օգնութեան դէպքում Հայաստանը կարող էր փրկուել կործանումից[14]: «Ներկայիս փոքրիկ Հայաստանը չի կարող մինչեւ իսկ իր տեղացի բնակչութեանը կերակրել, ուր մնաց թէ հիմա այնտեղ գտնուող երեքից հինգ հարիւր հազար փախստականներին...,- գրում էր գեներալը: Փախստականների ծանր դրութիւնը, կառավարութեան կամքին հակառակ, տեւականօրէն յանգեցնում է բանդաների ձեւականօրէն յանգեցնում է բանդաների ձեւաւորմանը եւ այդպիսով թուրքերի հետ նոր խառնակութիւններին: Հայաստանը թուրքերի կողմից ամբողջովին մեկուսացուած է: Նրանք արգելում են ցանկացած առեւտուր եւ երթեւեկութիւն, թաթար եւ պարսիկ բնակչութեանը դրդում են գաղթել, այնպէս որ հայկական կառավարութիւնը երկիւղ է կրում, որ կը յարձակուեն Երեւանի վրայ: Թուրքերը նաեւ այստեղ չեն պահպանել Բաթումի խաղաղութեան պայմանագրի պայմանները եւ գրաւուած գտնուող կարեւոր տարածքներ[15]: Հայաստանը կարող է կենսունակ դառնալ միայն Բրեստ-Լիտովսկի սահմաններով, առանց թուրքերի կողմից ցանկացուող սահմանային ուղղումների, որոնց դէպքում Թուրքիային կը յանձնուեն տնտեսապէս հէնց ամենակարեւոր շրջանները»[16]:

Ֆոն Կրեսը միաժամանակ ընդգծում էր, որ ներկայումս արտադրանք տալու ունակ շրջանները գրեթէ ամբողջովին գրաւուած էին թուրքերի կողմից, որոնք մեծ քանակութեամբ բամբակի պաշարներ էին արտահանում, ընդ որում՝ բերքի մի մասը հաւաքում էին թուրքերը, իսկ միւս մասը ոչնչանում էր: Նա յոյժ կարեւոր էր համարում, որ երկաթուղու՝ մինչեւ Նախիջեւան ձգուող հատուածը «անպայմանօրէն» յանձնուէր հայերին, իսկ թուրքերին կարելի էր թոյլատրել դրանով զինուորական ուժեր տեղափոխել, ինչպէս դա տեղի էր ունենում Վրաստանում: Ինչ վերաբերում էր Էնվերի կողմից ներկայացուած վերոնշեալ պատճառաբանութեանը, որ եթէ թուրքական զօրքերը ետ քաշուէին դէպի Բաթումի սահմանները, երկու պետութիւնների միջեւ պատերազմ կը բռնկուի: Էնվերի հակառակ պնդումը միայն պատրուակ է, պայմանագրին հակառակ, գրաւուած երկրի ամբողջական աւերման ու կողոպտման նպատակով ժամանակ շահելու համար: Թուրքերը դարձեալ ուզում են Ադրբեջանից ներխուժել զուտ հայկական՝ Ղարաբաղի շրջանը եւ այն զինաթափել: Եթէ մենք նրանց դա չարգելենք, ապա մահմեդականների դէմ ինքնալենք, ապա մահմեդականների դէմ ինքնապաշտպանուող լեռնաբնակների նոր կռիւներն անխուսափելի կդառնան...»[17]:

Յատկանշական է նաեւ, որ գեներալը հեռագրում կանցլերին դարձեալ յիշեց-

14 Էնվերի հեռագիրն ակնյայտօրէն դեսպանի կամ Հինդենբուրգի կողմից ուղարկուել էր նաեւ նրան:

15 Բաթումի հաշտութեան պայմանագրի մասին տե՛ս **Կարապետեան Մ. Ս.**, *Հայաստանը 1912-1920 թուականներին*, Երեւան, 2003, էջ 236-240:

16 *Deutschland und Armenien 1914-1918...*, էջ 420-421:

17 Նոյն տեղում, էջ 421:

© National Library of Armenia

նում էր Հայաստանը աւստրո-հունգարական շահերի ոլորտ դարձնելու եւ աւստրո-հունգարական պաշտպանութիւնը երաշխաւորող պայմանագիր կնքելու նպատակայարմարութեան մասին՝ հաւաստիացնելով, որ հայերը դա կ'ընդունէին[18]:

Օգոստոսի 5-ին Ֆոն Կրեսը պատուիրակութեան անունից կանցլերին ուղարկեց նաեւ իր բաւականին ընդարձակ, ամբողջական տեղեկագիրը՝ կատարուած այցի, հանդիպումների եւ դիտարկումների արդիւնքների մասին: Նա այնտեղ մասնաւորապէս նշում էր, որ իր պատուիրակութիւնը Հայաստանի կառավարութեան եւ բնակչութեան կողմից ջերմ ու համակրալից ընդունելութիւն էր ստացել, եւ Թիֆլիսի համեմատութեամբ, Երեւանում հայ սպաներն ու զինուորները շատ աւելի բարձր կարգապահութիւն էին ցուցաբերում: Դրական տպաւորութիւն էր թողել նաեւ գլխաւոր հրամանատար գեներալ Նազարբէկովը, որը, ինչպէս նշում էր Ֆոն Կրեսը, ռուսական բանակում մեծ համարում ունեցող գեներալ էր եղել[19]:

Ֆոն Կրեսը նաեւ ընդգծում էր, որ բոլշեւիզմը հայ ժողովրդի եւ հայ զինուորների մէջ շատ քիչ համակիրներ էր գտել: Ազգային ծանր դրութեան, հոգեւորականութեան մեծ ազդեցութեան եւ նաեւ կրթութեան՝ միջին հաշուով շատ ցածր մակարդակի հետեւանքով քաղաքական ու տնտեսական բնոյթի հակասութիւնները մղուել էին յետին պլան: Կուսակցական տարաձայնութիւնները մշտապէս հիմնականում վերաբերել են Թուրքերի հանդէպ վարուած քաղաքականութեանը, ընդ որում՝ եթէ արմատական տարրերը այդ առումով ակտիւ եւ «ագրեսիւ» քաղաքականութեան կողմնակից էին, ապա փոքրամասնութիւն կազմող չափաւորները հանդէս էին գալիս Թուրքիայի հանդէպ սպասողական, ձգձգումների միտուած քաղաքականութեան օգտին: Ըստ Ֆոն Կրեսի՝ այդ վերջին ուղղութեանն էին պատկանում նաեւ ներկայ կառավարութեան անդամները: Վարչապետ Ռուբէն Քաջազունին, ՆԳ նախարար Արամ Մանուկեանը, ԱԳ նախարար Ալեքսանդր Խատիսեանը, ռազմական նախարար գեներալ Հախուերդեանը եւ ֆինանսների նախարար Խաչատուր Կարճիկեանը գեներալի վրայ մեծանշանակ գործիչների տպաւորութիւն չէին թողել, բայց փոխարէնը՝ հանդարտ, շրջահայեաց եւ նպատակասլաց աշխատողների, որոնք վրացիներից դրականօրէն տարբերւում էին այն բանով, որ «իրատեսական քաղաքականութիւն» էին վարում եւ ձեռնպահ էին մնում ամպագոռգոռ խօսքերից:

Գեներալի վրայ խիստ մեծ տպաւորութիւն էր գործել Ամենայն հայոց կաթողիկոս Գէորգ Ե. Սուրէնեանցը, որն ըստ նրա, մի շատ պատկառելի այր էր՝ «իր բարձր դիրքի արժանաւորութեան եւ իր վրայ ծանրացող պատասխանատուութեան կշռին գիտակից, խելացի եւ նպատակասլաց, բանակցութիւնների ժամանակ գրեթէ մերժող զգուշաւորութեամբ ու սառնութեամբ, սեղանի մօտ՝ ամենաուշադիր եւ ամենասիրալիր տանտէրը»[20]: Հանգամանալից ներկայացնելով կաթողիկոսի հետ իր եւ բարոն Ֆրանկենշտայնի զրոյցն ու դրա դրամատիկ ընթացքը, որ պայմանաւորուած էր վանքի բակում կուտակուած հազարաւոր փախստականների ողբալից աղմուկով, ոչնչացման դատապարտուած ժողովրդի թշուառ, անմխիթար տուած ժողովրդի թշուառ, անմխիթար դրութեան վերաբերեալ կաթողիկոսի կատարած պարզաբանումներով, ինչպէս նաեւ՝ հայերի հանդէպ Թուրքերի կատարած ոճրագործութիւնների, այդ առնչուրած թեմբ Գերմանիայի, իբրեւ Թուրքիայի դաշնակցի, ցուցաբերած դիրքորոշման շուրջ մտքերի փոխանակութեամբ, գեներալն այնուհետեւ ներկայացնում էր այն ծանր իրավիճակը, որում գտնւում էր Հայաստանի Հանրապետութիւնը: Հայերը, ինչպէս շարադրում էր Ֆոն Կրեսը, Թուրքերի կողմից օղակուած էին մի շատ փոքրիկ տարածքում, որը, բացառութեամբ Երեւանի, ամբողջովին բարձր լեռնային գոտի էր իրենից ներկայացնում եւ գրեթէ ամբողջովին անբերրի էր: Թուրքերը ինչպէս վրացիների, այնպէս էլ հայերի հանդէպ չէին պահպանել իրենց իսկ կողմից թելադրուած՝ Բաթումի խաղաղութեան պայմանագրի որոշումները, եւ իրենց գծած սահմաններից այն կողմ զաւթել էին մի շարք տարածքներ, որոնց կորուստը Հայաստանի համար առանձնապէս ցաւալի էր, քանի որ այդպիսով նրանից խլուել էին արտադրութեան ունակ վերջին շրջանները: «Ներկայումս Թուրքերն ըստ երեւոյթին Ադրբեջանից շարժւում են 90 տոկոսով հայերով բնակեցուած Ղարաբաղի գաւառը եւ ուզում են այնտեղի բնակչութեանը զինաթափել այն պատրուակով, թէ այնտեղ հայերը վերջերս մուսուլմանների նկատմամբ ագրեսիւ են դարձել: Հայերի հանդէպ Թուրքական քաղաքականութիւնը պարզորոշ գծագրւում է: Թուրքերը դեռ ամենեւին չեն հրաժարուել հայերին բնաջնջելու իրենց դիտաւորութիւնից, նրանք փոխել են միայն իրենց տակտիկան: Հայերին գրգռում են, ինչպէս որ դա հնարաւոր է լինում, նրանց հանդէպ պրովոկացիաներ են սարքում՝ յոյս ունենալով այդ կերպ հայերի վրայ նոր յարձակումների պատրուակ ձեռք բերել: Եթէ դա չի յաջողւում, ապա նրանց փորձում են սովամահ անել եւ տնտեսապէս ամբողջովին կործանել: Այդ նպատակով չնչին պատրուակներով, Բաթումի պայմանագրին հակառակ, գրաւուած տարածքը սիստեմատիկ եւ պլանաւորուած կերպով կողոպտւում է, եւ այն ամէնը, ինչ հնարաւոր է տանել, տարւում է: Ռազմական աւարը, որ Թուրքերը Ալեքսանդրապոլում եւ նրա մերձակայքում գտել են, արտակարգ մեծ է: Այն մասին, որ նրանք, հակառակ ապրիլեան պայմանագրի որոշումներին, տեղափոխում են նաեւ այն ամբողջ բամբակը, որ կարողանում են իրենց ձեռքը գցել, ես արդէն տեղեկացրել եմ[21]: Այն դիմադրութիւնը, որ Թուրքերը ցուցաբերում են անիրաւացի կերպով գրաւուած տարածքը ազատելու կոչերի հանդէպ, իմ կարծիքով բացառապէս պայմանաւորուած է այն հանգամանքով, որ իրենց դեռ չի յաջողուել այդ շրջաններից ամբողջ աւարը յափշտակել»[22]:

Ֆոն Կրեսը նաեւ տեղեկացնում էր, որ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը հետեւողականօրէն խուսափում էր Թուրքերին նոր յարձակումներ կատարելու համար առիթ տալուց, սակայն չէր կարողանում արգելել նոր զինուած «բանդաների» կազմաւորումը, ինչը, ոչ այնքան քաղաքական շարժառիթներով էր թելադրուած, որքան քաղցի, որը մարդկանց հարկադրում էր կողոպուտի դիմել: Ինչ վերաբերում էր Ղարաբաղին, ապա Ղարաբաղի հայերը, ինչպէս նշում էր գեներալը, վայրի լեռնցիներ էին, որոնք կամ-

---

18 Ֆոն Կրեսն իր հեռագիրը միաժամանակ ուղարկեց նաեւ Վիեննա՝ աւստրիական արտգործնախարարութեանը (տե՛ս *Die Armenische Frage...*, էջ 574):

19 Գեներալ Նազարբէկեանն, ի դէպ, Ֆոն Կրեսի հետ զրոյցում դժգոհութիւն էր յայտնել իր ենթակայութեան տակ գտնուող 20,000-անոց բանակի ներուժի վերաբերեալ, որտեղ չնայած սպաներ շատ կային, բայց նրանք մեծ մասամբ պատերազմի ժամանակ էին սպայ դարձել եւ չունէին ո՛չ գիտելիք եւ ո՛չ էլ փորձառութիւն. մի խնդիր, որը, ինչպէս նշում էր Ֆոն Կրեսը, նոյնութեամբ առկայ էր նաեւ Վրաստանում:

20 *Deutschland und Armenien 1914-1918...*, էջ 423-424:

21 Ֆոն Կրեսը միաժամանակ յայտնում էր, որ բարոն Ֆրանկենշտայնը, որը աւտոմեքենայով Աղստեւով վերադարձել էր Թիֆլիս, ճանապարհին հանդիպել էր բամբակով բարձուած՝ 300-400 սայլերի, որոնք Ադրբեջանից գնում էին դէպի Ղարաքիլիսա (տե՛ս նոյն տեղում, էջ 425):

22 Նոյն տեղում:

© National Library of Armenia

վի երբեք չէին յանձնի իրենց զէնքերը: Իսկ եթէ յանկարծ թուրքերը, հակառակ իր նախազգուշացումներին, փորձէին այնտեղ զինաթափում իրականացնել, ապա թէժ կռիւների բռնկումը, յարակից բոլոր հետեւանքներով հանդերձ, անխուսափելի կը լինէր: Այդ հետեւանքները նաեւ զուտ ռազմական տեսանկիւնից վնասաբեր կը լինէին, քանի որ Ղարաբաղում լեռնային պատերազմ սկսելով՝ թուրքերը այնտեղ երկար ժամանակով ստիպուած կը լինէին մեծ քանակութեամբ ուժեր պահել, եթէ հայերին սովը չյաղթէր: Ընդ որում, ուշագրաւ է, որ Ֆոն Կրեսն, այդ առումով վերստին ընդգծելով Հայաստանի կառավարութեան խաղաղասիրական դիրքորոշումը եւ սադրանքների չենթարկուելու հաստատակամութիւնը, հարկ էր համարում մատնանշել, որ վերջինս ողջ ժողովրդի հետ միասին պատրաստ էր մինչեւ վերջին մարդը կռուել, եթէ թուրքերը նոր յարձակում ձեռնարկէին իրենց երկրի վրայ: Գեներալն այդ կերպ որոշակիօրէն ակնարկում էր, որ դա կարող էր տեղի ունենալ նաեւ Ղարաբաղի հայութեան վրայ թուրքերի կողմից յարձակում ձեռնարկելու դէպքում:

Ֆոն Կրեսը միաժամանակ տալիս էր հանգամանալից պարզաբանումներ Հայաստանի Հանրապետութեան ներքին իրադրութեան մասին, որտեղ 750,000 տեղացի բնակիչները եւ 300,000-500,000 փախստականները սովամահութեան էին դատապարտուած եւ «ձեռքերը կապուած վիճակում» դիտում էին, թէ թուրքերի կողմից գրաւուած շրջաններում ինչպէս էր բերքը տեղափոխւում կամ պարզապէս փչանում: Եթէ Գերմանիան եւ Աւստրո-Հունգարիան լրջօրէն մտադիր էին հայերին բնաջնջումից փրկել, ապա նրանց պէտք է նաեւ այնքան տարածք տրամադրէին, որը գոնէ կ'ապահովէր սննդի կարիքների մեծ մասը, իսկ ընթացիկ տարում, բոլոր դէպքերում երկու դաշնակիցները հայերին պէտք է մատակարարէին բաւականաչափ հացահատիկ: Այդ դէպքում միայն համընդհանուր աղէտը կը կանխուէր: Գեներալը, նկատի առնելով այն հանգամանքը, որ թուրքերը, չնայած գերմանական կողմի առարկութիւններին, թողել էին, որ հայկական բերքը փչանար, նաեւ առաջարկում էր հայ ժողովրդի գոյատեւման համար անհրաժեշտ հացահատիկը վերցնել այն պաշարներից, որոնք թուրքերը ստանալու էին Ուկրաինայից կամ Ռումինիայից: Շուտով կը սկսուէին ցրտերը, նշում էր Ֆոն Կրեսը, եւ եթէ մինչ այդ փախստականներին ազդեցիկ օգնութիւն չցուցաբերուէր, կամ նրանց չթոյլատրուէր վերադառնալ իրենց հայրենիքը, ապա սովը եւ սառնամանիքը նրանց կ'ոչնչացնէին:

Յատկանշական է, որ տեղեկագիրը ոչ միայն իրադրութեան համակողմանի, փաստացի լուսաբանում էր, այլեւ գերմանական կառավարութեանն ուղղուած մի ազդու կոչ: «Էնվերի այն պնդումները, թէ թուրքերը ստիպուած էին գրաւել Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի եւ միւս շրջանները՝ հայերի եւ վրացիների միջեւ բախումները կանխելու համար, յօրինուածք է, որի նպատակն է այստեղի իրադրութեանն անտեղեակներին խաբել եւ շահել այնքան ժամանակ, որ այդ շրջաններից բերքը տեղափոխուի, եւ այդ տարածքներն ամբողջովին կողոպտուեն: Ես առնուազն չեմ կարող պատկերացնել, որ գերմանական կայսրութիւնը կարող է հանդիստ դիտել, թէ ինչպէս են մահմեդականները մի քրիստոնեայ ժողովրդի սովամահութեան մատնել...: Եթէ Կոստանդնուպոլսի համաժողովը դեռ երկար իրեն սպասել տայ, բազմահազար մարդիկ կը դատապարտուեն մահուան, եւ ոչ միայն Արեւելքում հասարակական կարծիքը, այլեւ պատմութիւնը Գերմանիային պատասխանատու կը դարձնեն հայ ժողովրդի հետագայ բնաջնջման համար: Հաւատը Քառեակ միութիւնում Գերմանիայի ղեկավարդերի վերաբերեալ, ինչպէս ես բազմիցս իմ պարտքն եմ համարել տեղեկացնել, արդէն սասանուած է: Այն ամբողջովին կը վերանայ, եթէ մենք ի վիճակի չլինենք հայերին ոչնչացումից պաշտպանել: Արեւելքում մեր հեղինակութիւնը եւ մեր ազդեցութիւնն այդ դէպքում ի նպաստ թուրքերի զգալի վնաս կը կրեն: Այն հարցին, թէ ինչ պէտք է կատարուի Հայաստանը կենսունակ դարձնելու եւ կենտրոնական տէրութիւններից մէկի վրայ յենուելով՝ ինքնուրոյն գոյութիւն վարելու համար, ես կը կամենայի պատասխանել՝ ասելով, որ Հայաստանը պէտք է ստանայ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի սահմանները, բայց առանց թուրքերի համար նրանց կողմից ցանկացուող սահմանային շտկումների, քանի որ այդ սահմանային շտկումները Հայաստանից կը խլեն հէնց իր լաւագոյն սահմանային շրջանները: Դա միաժամանակ համապատասխանում է մեր սեփական շահերին, քանի որ եթէ այդ շրջանները թողնուեն թուրքերին, ապա դրանց արտադրանքը գործարարութեան մէջ թուրքերի անպիտանութեան հետեւանքով իսկոյն նեւեթ անկում կ'ապրի եւ գերմանական շուկայի համար կորած կը լինի: Ռոգման ցանցի համապատասխան ընդլայնման, անհրաժեշտ մեքենաների ներկրման դէպքում հայերը այդ բերրի տարածքներից մետաքսի, բամբակի, բրնձի, գինու, կոնեակի, սպիրտի եւ պտղի, հաւանօրէն նաեւ հանքագործական արտադրանքի հարուստ բերք կը հաւաքեն, բայց թուրքերը՝ երբեք»[23]:

Ուշագրաւ է, որ Ֆոն Կրեսն իր տեղեկագրում Բրեստի պայմանագրով սահմանուած Հայաստանի տնտեսական նշանակութիւնն էլ աւելի ակնառու դարձնելու համար հաղորդում էր մինչեւ իսկ որոշակի թուական տուեալներ այդ տարածքի տնտեսական շահութաբերութեան մասին՝ միաժամանակ կատարելով ուղղակի համեմատութիւն Հայաստանի Հանրապետութեան ներկայ, փաստացի տարածքի հետ: Բրեստի պայմանագրի սահմաններում գտնուող Հայաստանը, ըստ այդմ, կարող էր տարեկան արտադրել 1 միլիոն փութ[24] բամբակ, 40% թնդութիւն ունեցող 130,000 եւ 96% թնդութիւն ունեցող 100,000 դոյլ[25] սպիրտ, 90,000 դոյլ բարձրորակ կոնեակ, 4 միլիոն դոյլ գինի, որի 75%-ը կարող էր խաղաղութեան ժամանակ արտահանուել շատ էժան գնով, 500,000 փութ բրինձ, որի շուրջ կէսը խաղաղութեան ժամանակ կարող էր արտահանուել, ինչպէս նաեւ՝ 100,000 փութ լաւագոյն որակի մետաքսաբոժոժներ, մինչդեռ Հայաստանի Հանրապետութեան առկայ տարածքում բամբակ գրեթէ չէր կարող արտադրուել, միանգամայն բացառւում էր նաեւ բրնձի եւ մետաքսաբոժոժների արտադրութիւնը: Լաւագոյն դէպքում այնտեղ կ'արտադրուէր միայն 30,000 դոյլ 40% թնդութիւն ունեցող եւ 15,000 դոյլ 96% թնդութիւն ունեցող սպիրտ, 15,000 դոյլ բարձրորակ կոնեակ եւ 80,000 դոյլ գինի:

Այդ ամէնով հանդերձ, Ֆոն Կրեսն ամենեւին չէր նսեմացնում նաեւ այն իրական տնտեսական հնարաւորութիւնները, որ ունէր առկայ հանրապետութիւնը, եւ որոնք կարող էին արդիւնաւորուել, եթէ այնտեղ ազատ տեղաշարժման եւ տնտեսական գործունէութեան հնարաւորութիւն ստեղծուէր: Ընդգծելով, որ ռոգման եւ էլեկտրաէներգիայի արտադրութեան նպատակներով Սեւանայ լճի ջրի օգտագործու-

23 Revidierte Ausgabe der von Johannes Lepsius 1919 unter dem Titel "Deutschland und Armenien" herausgegebenen Sammlung diplomatischer Aktenstücke, zusammengestellt und eingeleitet von Wolfgang Gust. Թիւ 426 փաստաթուղթը:

24 1 փութը համապատասխանում է 16,38 կգ-ին:

25 Նկատի ունի հին ռուսական Wedro չափման միաւորը, որը կազմում է 12,3 լիտր:

© National Library of Armenia

մը Հայաստանի Հանրապետութեանը զարգացման լայն հնարաւորութիւններ էր ընձեռում՝ նա արտայայտում էր այն համոզումը, որ «գործարար, նախաձեռնող» եւ որոշակի կապիտալ ունեցող հայերը երկրում մեծ գործունէութիւն կը ծաւալէին, եթէ նրանց համապատասխան քաղաքական եւ տնտեսական հնարաւորութիւն ընձեռուէր: Այդ առումով նա խիստ կարեւոր էր համարում, որ Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա-Թաւրիզ երկաթուղին տրուէր հայերին[26], իսկ եթէ այդ երկաթուղին մնար թուրքերի ձեռքում, ապա Հայաստանը պարզապէս կը դատապարտուէր «տնտեսական մահուան»: Այդ պարագայում ոչ միայն Թուրքիան ի վիճակի չէր լինի երկաթուղու հնարաւորութիւններն ինչպէս հարկն է օգտագործել եւ այն պատշաճ կերպով պահպանել, այլեւ թուրքական իշխանութիւնները կռուի զանազան պատրուակներով հայերին կը զրկէին երկաթուղու տնտեսական օգտագործման հնարաւորութիւնից[27]:

Այն հանգամանքը, որ գերմանական բարձրաստիճան ռազմաքաղաքական գործիչն էր այդքան մանրամասն կերպով լուսաբանում համեմատաբար մեծ, կենսունակ Հայաստանի տնտեսական օգտաւէտութիւնը Գերմանիայի համար, Հայաստանի Հանրապետութեան եւ Գերմանիայի փոխյարաբերութիւններում դեռեւս իր նախադէպը չունէր, եւ այս տեղեկագիրը դրա առաջին փաստացի օրինակն էր: Անկասկած, հարցադրումն այդ կերպ գերմանական կառավարութեան համար աւելի համոզիչ պէտք է դառնար, իսկ հետեւութիւններ կատարելը՝ աւելի դիւրին: Գեներալն, այսպիսով, գործադրում էր իր բոլոր ջանքերը՝ գերմանական կառավարութեանն ի նպաստ հայերի գործուն քայլերի մղելու համար՝ հանգամանալից պարզաբանելով դրա թէ՛ քաղաքական, թէ՛ տնտեսական եւ թէ՛ բարոյական կարեւոր նշանակութիւնը Գերմանիայի համար: Ընդ որում՝ նա այդ անում էր՝ վճռականօրէն հերքելով նաեւ դիպուածաբար իրեն յայտնի դարձող այլ դիրքորոշումներն ու տեսակէտները[28]:

Օգոստոսի 12-ին Ֆոն Կրեսը մի նոր հեռագիր ուղարկեց արտգործնախարարութեանը, որտեղ, մերկացնելով Էնվերի վերոյիշեալ պատասխանում առկայ դեմագոգիան ու կեղծիքները, նա նորից ընդգծում էր հայ փախստականներին օր առաջ իրենց հայրենի բնակավայրերը վերադարձնելու կարեւորութիւնը: «Էնվերի պատասխանը յենւում է կեղծ փաստարկների վրայ,- գրում էր գեներալը:- Խօսքը վերաբերում է ոչ թէ նրան, որ հայերն իրաւունք ունենան տեղափոխուել Ալեքսանդրապոլ-Ջուլֆայից արեւելք ընկած տարածքը, այլ նրան, որ այնտեղ կուտակուած, սովից յուսահատութեան մատնուած հայերը երկաթուղով կարողանան վերադառնալ արեւմուտք, եւ որ ամբողջ տարածքը մինչեւ Բրեստի սահմանը Հայաստանի Հանրապետութեանը վերադարձուի փախստականների բնակեցման համար: Հայերին որոշ շրջաններ, զորօրինակ՝ Բաթում վերադառնալու վերաբերեալ սկզբունքօրէն յատկացուած թոյլտուութեան իրագործումը խոչընդոտւում է նրանով, որ Էսադ փաշան իւրաքանչիւր հայի համար գրաւոր դիմում է պահանջում եւ այդ դիմումներին ընթացք չի տալիս: Այստեղի թուրքական ներկայացուցչի տուեալներով Էսադ փաշայի մօտ պէտք է շաբաթներ ի վեր աւելի քան 1200 ընթացք չստացած դիմումներ լինեն»[29]:

Ֆոն Կրեսը, դարձեալ նկատի ունենալով Էնվերի կողմից բերուած մտացածին փաստարկները, միաժամանակ հաւաստիացնում էր, որ հայկական կառավարութիւնը Թուրքիայի հետ խաղաղ յարաբերութիւնների կողմնակից էր եւ նաեւ դրա կարիքն ունէր: Այն մինչեւ իսկ երկրից արտաքսել էր զինուած խմբաւորման առաջնորդին[30], նրա համախոհների մի մասին ձերբակալել, իսկ Ջուլֆայի, Բաքուի եւ Ուրմիայի մօտ գործող զինուած խմբերի պարագայում խօսքը վերաբերում էր մեծ մասամբ նախկին թուրքահայերին, որոնք ամէն բան կորցրել էին եւ այդ պատճառով շարունակում էին կռուել: Իսկ ինչ վերաբերում էր Էնվերի այն պնդմանը, թէ հայերի վերադարձի դէպքում թուրքական կռուող բանակի համար իբրեւ թէ անանպաստ իրադրութիւն կը ստեղծուէր, գեներալը մատնանշում էր, որ թիկունքի հետ թուրքական բանակի կապը կարող էր յանձնուել աւստրիացիների եւ գերմանացիների պաշտպանութեանը: «Հայաստանի Հանրապետութեան փոքրիկ տարածքի վրայ սովամահութեան մատնուած հարիւր հազարաւոր փախստականների կուտակումը,- գրում էր գեներալը,- անկասկած աւելի մեծ վտանգ է նշանակում, քան երկրում նրանց տեղաբաշխումը»[31]:

Ֆոն Կրեսի՝ ինչպէս վերոնշեալ տեղեկագիրն, այնպէս էլ յիշատակուած միւս հեռագրերը բաւական լայն կերպով շրջանառուեցին Գերմանիայի ղեկավար շրջանակներում: Կանցլերին ուղարկուած տեղեկագիրը ստացաւ նաեւ արտաքին գործերի նախարարութիւնը, որի պետքարտուղարի տեղակալ Բուշէն իր հերթին նրա մի հատուածը, որտեղ նաեւ ընդգծւում էր, որ Հայաստանը միայն կենտրոնական տերութիւնների շուտափոյթ օգնութեան դէպքում կործանումից կը փրկուէր, ուղարկեց գերմանական ռազմական գլխաւոր շտաբի պետ բարոն ֆոն Բերկհայմին[32]: Իսկ ֆոն Կրեսի՝ օգոստոսի 12-ի հեռագիրը արտգործնախարարութեան պետքարտուղար ֆոն Հինթցէն օգոստոսի 22-ին ուղարկեց նաեւ Կոստանդնուպոլսի դեսպան Բեռնշտորֆին՝ նրան յանձնարարելով Բ. Դռան ուշադրութիւնը հրաւիրել այն փաստի վրայ, որ դէպի որոշ շրջաններ հայ փախստականների վերադարձը թոյլատրելու՝ նրա մտադրութիւնը Էսադ փաշայի կողմից ձախողման էր ենթարկւում: Դեսպանին միաժամանակ յանձնարարւում էր թուրքական կառավարութեանը խնդրել մէկ անգամ եւս կշռադատել, թէ արդեօք

26 Այդ դէպքում, ըստ ֆոն Կրեսի, Հայաստանում եւս, ինչպէս Վրաստանում, թուրքերին կարող էր հնարաւորութիւն տրուել երկաթուղով կատարել իրենց ռազմական փոխադրումները:

27 Նոյն տեղում:

28 Հայաստանի վարչապետն, օրինակ, ֆոն Կրեսի հետ ունեցած գաղտնի զրոյցի ժամանակ նրան ներկայացրել էր Կոստանդնուպոլսում գտնուող՝ Հայաստանի ներկայացուցչի այն տեղեկութիւնը, որ Կոստանդնուպոլսի գերմանական դեսպան Բեռնշտորֆը փորձում էր համաժողովի հրաւիրումը ձգձգել եւ նաեւ խոչընդոտել, որ Հայաստանը աւստրո-հունգարական շահերի ոլորտ դառնար՝ գրաւուելով աւստրո-հունգարական զօրամասերի կողմից: «...Առանց իմանալու այն դրդապատճառները, որոնք պարոն դեսպանին իր դիրքորոշման համար առիթ են ծառայել,- գրում էր այդ առնչութեամբ գեներալը,- ես կ'ուզենայի իմ տեսակէտից ընդգծել, որ Կովկասում իրադրութիւնը հրամայաբար պահանջում է համաժողովի շուտափոյթ հրաւիրում եւ առկախ հարցերի, յատկապէս՝ սահմանների կարգաւորման ամենամօտակայ լուծում: Չկայ մի օր, երբ սահմանային միջադէպեր ի յայտ չգան, որոնց պատճառն այն է, որ սահմանները դեռ որոշուած չեն: Այդ միջադէպերը կովկասեան պետութիւնների միջեւ արտակարգ գրգռուածութիւն են ստեղծում, եւ մարդիկ արդէն սկսում են կասկած տածել առ այն, որ կենտրոնական տերութիւնները կովկասեան պետութիւնների հանդէպ իրենց խոստումներին լրջօրէն են վերաբերւում»: Նոյն տեղում:

29 Նոյն տեղում, թիւ 432 փաստաթուղթը:

30 Խօսքն, անկասկած, վերաբերում է Անդրանիկին:

31 Նոյն տեղում:

32 *Die Armenische Frage...*, էջ 572-573: Գեներալ ֆոն Կրեսը թուրքական կողմին որոշակի զիջումներ պարտադրելու համար յաճախ սեփական նախաձեռնութեամբ արգելում էր նրանց կովկասեան երկաթուղագծերն օգտագործել: Տե՛ս Գուստով Բեռնշտորֆի օգոստոսի 6-ի հեռագիրը: *Revidierte Ausgabe...*, թիւ 427 փաստաթուղթը:

© National Library of Armenia

մինչեւ Բրեստի սահմանն ընկած ամբողջ տարածքը վերադարձող հայերի առջեւ բացելը աւելի մեծ կարեւորութիւն չունէր, քան դրա արգելումը: Դեսպանին հրահանգւում էր առժամանակ Բ. Դռանը չյայտնել թուրքական բանակի յետադարձ կապը գերմանացիների եւ աւստրո-հունգարացիների պաշտպանութեան տակ վերցնելու՝ Ֆոն Կրեսի արտայայտած նկատառման մասին[33]:

Ֆոն Կրեսի եւ Հայաստանի հանրապետութեան կողմից գերմանական կառավարութեանը ներկայացուող տեղեկագրերը, կոչերն ու խնդրագրերը իրենց բնոյթով, հարցերի ընդգրկումով եւ բովանդակութեամբ այնպիսին էին, որ Գերմանիան կարծես թէ էլ աւելի պէտք է յստակեցնէր իր դիրքորոշումը հայկական խնդրի առնչութեամբ՝ իր թուրք դաշնակցին պարտադրելով ճանաչել Բրեստի կամ առնուազն Բաթումի պայմանագրով նախանշուած սահմանները, ինչպէս եւ հայ փախստականներին անվերապահօրէն վերադարձի հնարաւորութիւն տալ: Գերմանա-թուրքական յարաբերութիւններում ինչպէս հայկական, այնպէս էլ կովկասեան այլ խնդիրների հետեւանքով առաջացած լարուածութիւնը այդպիսով կը հասնէր նաեւ իր՝ քիչ թէ շատ արդիւնաւէտ հանգուցակէտին: Պաշտօնական Գերմանիան, սակայն, հակուած չէր ցուցաբերել այդ վճռականութիւնը, եւ յատկանշական է, որ մասնաւորապէս հայկական խնդրի առնչութեամբ Գերմանիայի քաղաքական ղեկավարութեան ցուցաբերած ձեռնպահ եւ հանդուրժողական դիրքորոշմանը զգալիօրէն նպաստում էր Կոստանդնուպոլսի դեսպան Բեռնշտորֆը, որի վերաբերեալ Ֆոն Կրեսի արտայայտած վերոնշեալ տեսակէտը միանգամայն համապատասխանում էր իրականութեանը: Դրա ցայտուն վկայութիւնն էր, օրինակ, օգոստոսի 5-ին դեսպանի կողմից արտգործնախարարութեանն ուղարկուած հեռագիրը, որտեղ նա նշում էր, որ Թուրքիայի հետ բոլոր վիճելի հարցերը անհրաժեշտ էր յետաձգել մինչեւ պատերազմի աւարտը, եւ որ նա անձամբ քաղաքական ու ռազմական մեծ յաջողութիւն կը համարէր, եթէ Գերմանիան Թուրքիային կարողանար մինչեւ պատերազմի վերջը պահել իր կողքին եւ նաեւ օգնէր, որ վերջինս պատերազմից հնարաւորինս անվնաս եւ նուազագոյն կորուստներով դուրս գար, քանի որ, ըստ դեսպանի, այլապէս Գերմանիայի հեղինակութիւնը Թուրքիայում կը տապալուէր: Ըստ դեսպանի՝ մեծ դժուարութեամբ էր իրեն եւ գեներալ Ֆոն Զեկտին յաջողուել Թուրքիային համոզել, որ այն իր կովկասեան գործողութիւնների ժամանակ Ռուսաստանի, ինչպէս նաեւ Վրաստանի հետ հաշուի նստէր: Թուրքական կառավարութիւնը դրան համաձայնել էր, քանի որ նա դեռ չէր ուզում խզել կապերը Գերմանիայի հետ, մինչդեռ, Վրաստան ներխուժելով, հարկադրուած կը լինէր պայքարել գերմանական զինուած ուժերի դէմ: Թուրքիայի զիջողականութիւնը դրանով, ըստ դեսպանի, հասել էր իր վերջնասահմանին, եւ նրան աւելին հնարաւոր չէր պարտադրել:

Բեռնշտորֆն անգամ փորձում էր կառավարութեանը հաշտեցնել այն մտքի հետ, որ Թուրքիան մինչեւ իսկ Բրեստի պայմանագրով ամրագրուած սահմանների ճանաչումը խոստանալու դէպքում կարող էր այն չկատարել: «Եթէ նոյնիսկ նրանք մեզ խոստանան ընդհանուր առմամբ ետ քաշուել մինչեւ Բրեստ-Լիտովսկի սահմանը,- գրում էր նա,- նրանք կովկասեան տարածքում իշխող լիարժէք անարխիայի պարագայում հեշտութեամբ պատրուակ կը գտնեն հայերի հետ այդուհետ էլ կռուելու եւ իրենց խոստումը չկատարելու համար: Ֆելդմարշալ Ֆոն Հինդենբուրգին ուղղուած՝ Էնվեր փաշայի վերջին հեռագիրը այդ հարցում կասկած չի թողնում:

33 Նոյն տեղում, թիւ 432 փաստաթուղթը:

Դրանից նաեւ բխում է, որ թուրքերը հայերի հանդէպ բնաւ բարի ցանկութիւններ չունեն, ինչում ես երբեք չեմ տարակուսել: ... Ինձ հետ գաղտնազրոյցում հայ պատուիրակները խոստովանում են, որ հայերը ոչ մի դէպքում չեն վերադառնայ այն տարածքները, որոնք գտնուում են թուրքական տիրապետութեան ներքոյ: Իմ կարծիքով ուտոպիա է, երբ Թիֆլիսից թուրքերից հայերի համար երաշխիքներ են պահանջւում: Այնտեղ, որտեղ մշակութային ցածր մակարդակի վրայ առկայ է ռասսայական ատելութիւնը, չեն կարող երաշխիքներ լինել: Ովքեր մեծամասնութիւն են կազմում, փոքրամասնութեանը կ'ոչնչացնեն: Անառարկելի գերմանացի վկաների կողմից ապացուցուած է, որ հայերը նոյնպէս այդպէս են վարուում: Դա սովամահ եղողների հանդէպ կարեկցութեան դրդապատճառով թելադրուած չէ: Դրան թուրքերը միայն պատասխանում են, որ Սիրիայում եւ Միջագետքում իրենց հաւատակիցներից հարիւրհազարաւորները եւ նաեւ հազարաւոր թուրքական զինուորներ սովամահ են եղել, ինչի պատճառով Թուրքիան, սակայն, չի յոգնել պատերազմից: Բացի այդ՝ թուրքերի համար անպատճառ ցանկալի է, որ կէս միլիոն հայեր մահանան...»[34]:

Յատկանշական է, որ դրանով հանդերձ՝ Բեռնշտորֆը շարունակում էր յամառօրէն պաշտպանել իր՝ նախկինում եւս արտայայտած այն տեսակէտը, որ կարելի էր Հայաստանը, նաեւ Վրաստանն ամբողջովին զոհաբերել կամ, այլ կերպ ասած, զիջել Թուրքիային՝ փոխարէնը Թուրքիայից ստանալով որոշակի քաղաքական ու տնտեսական կոնցեսիաներ: «Քանի որ ես համոզուած եմ,- գրում էր նա,- որ մենք, բաւականաչափ ուժ չունենալով, չենք կարող թուրքերին ետ պահել Կովկասում իրենց ցանկութիւնների կատարումից՝ ... ես սկզբից եւեթ միջնորդել եմ, որ քաղաքական ու տնտեսական կոնցեսիաների դիմաց նրանց այնտեղ գործելու ազատութիւն տանք: Այդ դէպքում մենք նոր պատասխանատուութիւն չէինք ստանձնի այնպիսի կասկածելի բարեկամների համար, ինչպէս վրացիներն ու հայերն են: Երբ արդէն պարզ է դարձել, որ բացակայում են այն նախադրեալները, որոնք նկատի առնելով՝ մենք Վրաստան գնացինք, ես այսօր, աւելի քան երբեւէ, այդ նոյն կարծիքին եմ»[35]:

Իսկ այն դէպքում, եթէ նրա առաջարկած քաղաքականութիւնը Բեռլինի կողմից իրագործելի չհամարուէր, ապա նրա կարծիքով մնում էր գործելու միայն երկու հնարաւորութիւն. կա՛մ Գերմանիան պէտք է այնքան զօրամասեր ուղարկէր Վրաստան եւ Հայաստան, որ կարողանար բռնի կերպով իր կամքը թուրքերին պարտադրել, կա՛մ պէտք է Թուրքիային յայտարարէր, որ Գերմանիան նրա «հաստակողութեան» հետեւանքով այլեւս որեւէ արժէք չէր տալիս Կոստանդնուպոլսում համաժողով հրաւիրելուն, փոխարէնը, սակայն, թուրքերը թողնուելու էին իրենց յոյսին, եթէ Ռուսաստանի հետ նոր պատերազմ սկսուէր: Միաժամանակ Գերմանիան կը շարունակէր Վրաստանում իր դիրքերը տնտեսական նպատակներով ամրապնդել: Դեսպանի համոզմամբ, սակայն, այդ երկու գործելակերպն էլ կ'առաջացնէին Քառեակ միութեան տրոհման վտանգ. «...ես, սակայն, առաջացած կոնֆլիկտի որեւէ ուրիշ լուծում չեմ տեսնում,- գրում էր նա,- քանի որ բնաւ չի կարելի կարծել, թէ թուրքերն այժմ յօժարակամ կերպով եւ անկեղծօրէն տեղի կը տան»[36]:

Ինքնին հասկանալի է, որ հայ ժողովրդի շահերի պաշտպանութեան դէպքում Քառեակ միութեան տրոհման՝ դեսպանի մտահոգութիւնն իրատեսական չէր,

34 *Die Armenische Frage...*, էջ 565-566:

35 Նոյն տեղում, էջ 566:

36 Նոյն տեղում:

© National Library of Armenia

եւ այն պարզապէս պատրուակ էր ծառայում Թուրքիայի հանդէպ հանդուրժողական քաղաքականութեան վարման՝ նրա կողմից պաշտպանուող տեսակէտը հնարաւորինս ամրապնդելու համար: Բեռնշտորֆը կովկասեան խնդրում միանշանակօրէն թուրքական քաղաքականութեան եւ շահերի պաշտպանութեան կողմնակից էր՝ դա համապատասխան համարելով կամ փորձելով համապատասխանեցնել Գերմանիայի շահերին, եւ եթէ նկատի առնենք, որ դեսպանները, արտաքին քաղաքականութեան իրագործումից զատ, սովորաբար կարեւոր դերակատարութիւն ունէին նաեւ այդ քաղաքականութեան մշակման հարցում, ապա այդ օրերին նրա պաշտօնավարութիւնը կարելի էր համարել հերթական չարիքը օրհասական դրութեան մէջ գտնուող հայութեան համար:

Բեռնշտորֆն, ինչպէս իր թուրք գործընկերները, ամենեւին շահագրգռուած չէր նաեւ Կոստանդնուպոլսի համաժողովի կազմակերպման հարցում՝ Կովկասին վերաբերող սահմանային եւ այլ խնդիրների կարգաւորման առաւել ցանկալի ճանապարհը համարելով դաշնակից պետութիւնների միջեւ եռակուլիսային համաձայնութեան կայացումը: Ուստի, հասկանալի է, որ իր յաջորդ՝ օգոստոսի 6-ի հեռագրում նա կասկածի էր ենթարկում նաեւ Կովկասում համաժողով հրաւիրելու անհրաժեշտութիւնը՝ նշելով, որ թուրքական կողմը համաձայն էր, որ համաժողովում քննարկման ենթակայ հարցերը կարգաւորուէին չորս դաշնակիցների միջեւ փոխհամաձայնութեան կայացման միջոցով: Ուշագրաւ էր, որ դեսպանը միաժամանակ սկզբից եւեթ բացառում էր Թուրքիայի կողմից Բրեստի պայմանագրային սահմանների ճանաչումը՝ պնդելով, որ Թուրքիայի հետ բոլոր հարցերի վերաբերեալ կարելի էր փոխհամաձայնութեան հասնել, բացի այդ հարցից: Թուրքական կառավարութիւնը, նշում էր դեսպանը, չէր կամենում անգամ լսել Բրեստի պայմանագրի մասին: Նրանք այդ պահանջը մշտապէս դիտում էին որպէս «Թուրքիայի ենթարկում վրացիների եւ հայերի ցանկութիւններին, որոնք միանգամայն բաւարարուած կը լինէին Բաթումի խաղաղութեան պայմանագրով, եթէ մենք նրանց չպաշտպանէինք»[37]:

Յատկանշական է, որ դեսպանը չէր զլանում անձամբ նոյնպէս միանգամայն բացառել Բրեստի պայմանագրի համաձայն սահմանները կարգաւորելու հնարաւորութիւնը. «Այդ հարցը, իմ կարծիքով, առհասարակ լուծելի չէ,- գրում էր նա,- քանի որ թուրքերը տեղի չեն տայ, իսկ մենք միջոցներ չունենք նրանց ստիպելու, որ ետ գնան մինչեւ Բրեստ-Լիտովսկի սահմանները...»[38]:

Ինքնին հասկանալի է, որ դեսպանը կա՛մ գերագնահատում էր գերմանական ճնշմանը թուրքական ընդդիմութեան հնարաւորութիւնը, կա՛մ պարզապէս փորձում էր իրավիճակն այդ կերպ բնութագրել՝ թուրքական կառավարութեան ցանկութիւններին միանգամայն համահունչ իր քաղաքական դիրքորոշումն առաւել համոզիչ դարձնելու համար, մինչդեռ Թուրքիայի դիմադրութեան կամ Թուրքիայի վրայ ճնշում գործադրելու դէպքում քառեակ միութեան տրոհման հնարաւորութիւնը հիմնաւորապէս հերքուել էր ֆոն Լոսովի, ֆոն Կրեսի եւ այլոց կողմից:

Բեռնշտորֆը հեռագրում միաժամանակ քննադատութեամբ էր անդրադառնում գեներալ ֆոն Կրեսի հայանպաստ գործելակերպին՝ յայտնելով, թէ Էնվեր փաշան իր հետ ունեցած տեւական զրոյցում նոյնպէս շատ էր գանգատուել Վրաստանին եւ Հայաստանին Գերմանիայի կողմից ցուցաբերուող «պաշտպանողական քաղաքականութիւնից»: Այդ առն-

37 *Revidierte Ausgabe...*, թիւ 427 փաստաթուղթը:

38 Նոյն տեղում:

չութեամբ դեսպանը մասնաւորապէս անդրադառնում էր այն փաստին, որ ֆոն Կրեսը մի շարք գերմանացի սպաների հետ մեկնել էր Երեւան՝ «հայկական կառավարութիւնը կազմակերպելու համար»[39]: Ըստ դեսպանի՝ այդ այցը կարող էր որոշակի վտանգ ստեղծել, այն է՝ հայերին ոգեւորել նոր կռիւներ սկսելու, որոնց ժամանակ, դատելով ֆոն Կրեսի գործելակերպից, գերմանացի սպաները կարող էին հայերի կողմից հանդէս գալ: Դեսպանը խիստ քննադատութեամբ էր անդրադառնում նաեւ այն փաստին, որ, ինչպէս արդէն նշուել է, ֆոն Կրեսը յաճախ արգելում էր թուրքական կողմին կովկասեան երկաթուղին օգտագործել. մի իրողութիւն, որը դեսպանի կարծիքով վնասում էր պատերազմավարմանը եւ Գերմանիայի հանդէպ Թուրքիայում բացասական տրամադրութիւններ էր ստեղծում: «Մեր բանակի գլխաւոր հրամանատարութիւնը կարգադրում է, որ թուրքական զօրամասերը առաւելագոյն արագութեամբ տեղափոխուեն Միջագետք,- գրում էր նա:- Գեներալ ֆոն Կրեսն արգելում է երկաթուղու օգտագործումը՝ թուրքերին հարկադրելու համար, որ զիջումների գնան: Արդիւնքում թուրքերը տեղի չեն տալիս, իսկ կարգադրուած ռազմական գործողութիւններն էլ չեն կայանում, այսինքն խոչընդոտւում է ընդհանուր պատերազմավարումը: Դրանից, այսպիսով, միայն մեր թշնամիներն են օգտուում»[40]:

Ինչ վերաբերում է ֆոն Կրեսին, ապա նա, ջանալով անել հնարաւորը հայ ժողովրդին օգնելու համար, Բեռնշտորֆի մօտ նոյնպէս հայերի դրութեան վերաբերեալ ըմբռնում ձեւաւորելու մի փորձ կատարեց՝ օգոստոսի 20-ին նրան ուղարկելով մի հեռագիր, որը դեսպանն իր հերթին օգոստոսի 25-ին ուղարկեց նաեւ արտգործնախարարութեանը: «Հայ փախստականների վերադարձի հարցի առնչութեամբ թուրքական թուացեալ համաձայնութիւնը ոչ մի արժէք չունի,- գրում էր ֆոն Կրեսը:- Մինչդեռ թուրքական զօրքերի կողմից գրաւուած տարածքներում բերքը, որչափ որ այն թուրքերի կողմից չի տեղափոխուում, աշխատուժի անբաւարարութեան հետեւանքով փտում է, Էնվեր փաշայի մատնանշած գծից արեւելք ընկած անբերրի շրջանում սեղմուած մարդկանց զանգուածներն անխուսափելի կործանման են դատապարտուած: Դրութիւնն օրէցօր աւելի է վատթարանում: Եթէ Հայաստանի կառավարութեան եւ աւագագոյն հոգեւորականութեան օգնութեան յուսահատ կանչերը դառնան ձայն բարբառոյ անապատի, ապա այդ հին քրիստոնեայ ժողովրդի ոչնչացման պատասխանատուութիւնը յաւերժ կը ծանրանայ Գերմանիայի եւ Աւստրիայի վրայ: Պատմութիւնը զիջում չի կատարելու եւ չպէտք է կատարի այն հարցում, որ կենտրոնական Եւրոպայի երկու մեծ քրիստոնեայ տերութիւնները ի վիճակի չեղան գոնէ այս դէպքում, երբ հարցը վերաբերում է մի ամբողջ ժողովրդի լինել-չլինելուն, իրենց կամքը պարտադրել իրենց ասիացի դաշնակցին...»[41]:

39 Նոյն տեղում: Բեռնշտորֆը, փաստօրէն, չէր խուսափում նաեւ այդօրինակ սադրիչ տեղեկութիւններից: Ինչպէս արդէն նշուել է, ֆոն Կրեսը մեկնել էր Երեւան՝ հայկական կառավարութեանը ներկայանալու, այլ ոչ թէ այն կազմակերպելու համար:

40 Նոյն տեղում: Հեռագրի վերջում նա հակիրճ հաղորդում էր նաեւ, որ թուրքական նախարարների խորհուրդը թուրքահայերի համար համաներման կարգադրութիւնն արդէն կատարել էր, եւ դրա իրագործումը յանձնարարուած էր Զամփոլադին:

41 *Deutschland und Armenien 1914-1918...*, էջ 431: Այնուհետեւ ֆոն Կրեսը դեսպանի ուշադրութիւնը դարձեալ հրաւիրում էր այն հանգամանքի վրայ, որ Էսադ փաշան, մինչեւ իսկ այն դէպքում, երբ խօսքը վերաբերում էր միայն որոշ շրջանների, փաստացիօրէն մերժում էր կատարուած դիմումների հիման վրայ հայերին վերադարձի թոյլտուութիւն յատկացնել: Իսկ հեռագրի մնացած տեքստը, որ մօտ տասը տող էր կազ-

© National Library of Armenia

Հայ ժողովրդի դրութեան վերաբերեալ Գերմանիայի կողմից գործուն միջամտութեան ցուցաբերման հարցի առնչութեամբ դեռ յուլիս ամսին մի կողմից Գերմանիայի եւ Թուրքիայի միջեւ, միւս կողմից հէնց Գերմանիայի ռազմաքաղաքական շրջաններում ի յայտ եկած տարակարծութիւններն ու հակասութիւնները օգոստոսի սկզբին, այսպիսով, էլ աւելի սուր բնոյթ էին ընդունել, ինչը պաշտօնական Գերմանիային որոշակիօրէն հարկադրում էր յստակեցնել հարցի առնչութեամբ իր դիրքորոշումը: Կարելի էր ենթադրել, որ գեներալներ Ֆոն Լոսովի, Ֆոն Կրեսի, նաեւ հայ պատուիրակութեան հետեւողական տեղեկատուութեան, Բրեստի պայմանագրային սահմանների ճանաչման հարցի նախընթաց վերարծարծումների արդիւնքում Գերմանիան պէտք է վերջապէս հրաժարուէր Կովկասում թուրքական ինքնիշխան քաղաքականութեան հանդէպ իր զուսպ ու հանդուրժողական կեցուածքից եւ Թուրքիայի վրայ գործադրէր իրական ճնշում Բրեստի կամ առնուազն Բաթումի պայմանագրային սահմանները ճանաչելու, ինչպէս եւ իր հակահայկական քաղաքականութիւնը դադարեցնելու համար: Պաշտօնական Գերմանիան, սակայն, շարունակում էր հայ ժողովրդի ճակատագրի հանդէպ պատասխանատուութիւնը հնարաւորինս իրենից վանել՝ որոշակի դիրքորոշման արտայայտման անհրաժեշտութեան դէպքում առաւել հակուած լինելով հետեւելու Բեռնշտորֆի կողմից պաշտպանուող քաղաքական գծին:

Ֆոն Կրեսը, ինչպէս նշուեց, օգոստոսի 4-ի իր վերոնշեալ հեռագիրն ուղարկել էր նաեւ Վիեննա՝ աւստրիական արտգործնախարարութեանը: Գերմանական արտգործնախարարութիւնն այդ հանգամանքը համարում էր շարժառիթ՝ հարցը Աւստրո-Հունգարիայի հայեցողութեանը թողնելու եւ Գերմանիայի ձեռնպահութիւնը հիմնաւորելու համար: Այս շեշտադրումով էր բնութագրւում Բերլհայմին ուղղուած՝ ԱԳՆ քաղաքական բաժանմունքի ղեկավար Ֆոն Շթումի օգոստոսի 19-ի հեռագրային ցուցումն այն մասին, որ Հայաստանին օգնութիւն ցուցաբերելու հարցի առնչութեամբ յանձնարարելի էր համարւում նախ սպասել Վիեննայի կառավարութեան կողմից դիրքորոշման արտայայտմանը: «Մեզ համար որոշակի բեռնաթափում կը լինէր,- այնտեղ նշում էր Ֆոն Շթումը,- եթէ նա (աւստրո-հունգարական կառավարութիւնը - Ա. Հ.) ստանձնէր այդ անշնորհակալ առաջադրանքը: Ամէն դէպքում անհաւանական է, որ նա այդ կ'անի»[42]:

Գերմանիայի քաղաքական ղեկավարութիւնը նոյնիսկ խորհում էր այդ «անշնորհակալ հարցից» ազատուել՝ հայ փախստականներին վերադարձի հնարաւորութիւն ստեղծելու փոխարէն նրանց դէպի հիւսիս, ասել է թէ՝ Վրաստան կամ, թերեւս նաեւ՝ Ռուսաստան ուղարկելու միջոցով: Այդ բովանդակութիւնն ունէր Ֆոն Շթումի կողմից օգոստոսի 14-ին Ֆոն Կրեսին ուղղուած հեռագիրը, որտեղ նշւում էր, որ փախստականների հարցի վերաբերեալ թուրքական կառավարութեան «մինչայժմեան դիրքորոշումը» գերմանական կողմին հարկադրում էր քննել այն

42 *Die Armenische Frage...*, էջ 574: Գերմանիան դա Աւստրո-Հունգարիայի հայեցողութեանն էր թողնում՝ ամբողջովին ձեռնպահ մնալով այդ հարցում որեւէ դերակատարութիւն ունենալուց: Այդ առումով նաեւ բնութագրական է, որ պետքարտուղար Հինթցէն դեռ օգոստոսի 4-ին Բարոն Ֆոն Լերսներին տեղեկացնում էր, որ քանի որ Հայաստանում տեղակայելու համար համապատասխան գերմանական զօրամասեր չկային, ապա նա բնաւ չէր առարկում Հայաստանում աւստրո-հունգարական զօրամասեր տեղակայելու մտքին: Նոյն տեղում, էջ 564:

մում, անհնար է եղել վերծանել, եւ դրանից պահպանուել են միայն առանձին կցկտուր բառեր ու արտայայտութիւններ (տե՛ս *Revidierte Ausgabe...*, թիւ 434 փաստաթուղթը):

հարցը, թէ արդեօք հայ փախստականների տեղափոխումը դէպի հիւսիս հնարաւոր էր եւ կարող էր անմիջապէս սկսուել: Ընդ որում՝ նա Ֆոն Կրեսին խնդրում էր իր տեսակէտն արտայայտել այդ առնչութեամբ եւ, ըստ հանգամանքների, ձեռնարկել միջոցառումներ դա իրագործելու համար[43]:

Չնայած այդ առնչութեամբ Ֆոն Կրեսի գրաւոր պատասխանը բացակայում է հրապարակում առկայ սկզբնաղբիւրներում, այնուհանդերձ, գերմանական պաշտօնական դրագրութեան հետագայ ընթացքը թոյլ է տալիս ենթադրել, որ այն պէտք է բացասական եղած լինի:

Ինչեւէ, ի վերջոյ, օգոստոսի 20-ին գեներալ Ֆոն Կրեսին ուղարկուած հեռագրում գերմանական արտգործնախարարութիւնը բաւականին, կարելի է ասել, աննախադէպ կերպով որոշակի արտայայտեց իր դիրքորոշումը հայկական խնդրի առնչութեամբ: «Առանց ամենաննշան իսկ չափով թերագնահատելու այն քաղաքական կարեւորութիւնը, որ ունի հայերի դրութեան բարելաւումը մեր եւ Թուրքիայի համար,- գրում էր արտգործնախարարութեան պետքարտուղար Հինթցէն գեներալին,- եւ մարդկայնօրէն լիովին կիսելով նրանց տառապանքները՝ մենք, սակայն, հարկադրուած ենք, հաշուի առնելով Թուրքիային, հայկական ցանկութիւնների հանդէպ որոշակի զսպուածութիւն պահպանել: Ինքնին հասկանալի է, որ մենք ազատ ենք մարդասիրական միջոցառումներ իրականացնելու հարցում: Այդ տեսանկիւնից հայերի՝ այստեղի բարեկամները մեզ դրդում են Երեւանի կառավարութեանը նոյն քանակութեամբ հացահատիկ տալ, ինչպէս վրացական կառավարութեանը: Թէ արդեօք հնարաւոր կը լինի այդ հարցը համաձայնեցնել սննդամատակարարման ռազմական ծառայութեան հետ, շատ կասկածելի է: Նախքան ես այդ ուղղութեամբ փորձ կը ձեռնարկեմ, Ձերդ Բարեծնութեանը խնդրում եմ տեղեկացնել, թէ արդեօ՞ք հնարաւոր է Վրաստանով հացահատիկ հասցնել Հայաստան, չնայած մենք հէնց իրենց՝ վրացիներին էլ աւելի աննշան քանակութեամբ ենք կարողանում տալ, քան սկզբում խոստացել ենք»[44]:

Օգոստոսի 24-ին պետքարտուղար Հինթցէն Ֆոն Կրեսին ուղղուած մի հեռագրով վերոնշեալ ոգով արտայայտեց նաեւ իր վերաբերմունքը նրա՝ Երեւան կատարած այցելութեան նկատմամբ, որտեղ նա մասնաւորապէս նշում էր, որ միանգամայն համաձայն էր Ֆոն Կրեսի՝ Երեւան կատարած այցելութեան հետ եւ միաժամանակ ողջունում էր, որ նա չի մասնակցել պառլամենտի բացմանը: «Քանի որ կայսերական դեսպանի շատ լուրջ առարկութիւնները եւ բանակի գլխաւոր հրամանատարութեան եռանդուն քայլերը Թուրքիային հայկական տարածքն ազատելու եւ փախստականների վերադարձը թոյլատրելու որոշմանը չեն յանգեցրել, ցաւօք, կասկածելի է թւում, թէ մենք առհասարակ ի վիճակի կը լինենք հայերին ազդեցիկ օգնութիւն ցուցաբերել: Մեր հետագայ գործելակերպը կախուած կը լինի ընդհանուր քաղաքական եւ ռազմական իրավիճակից: Այդ ընթացքում մենք պէտք է խուսափենք նոր յոյսեր յարուցել հայերի մէջ, որոնց, հաւանաբար, ստիպուած կը լինենք յուսախաբեցնել»[45]:

Ինչեւէ, վերոնշեալ պաշտօնական հեռագրերով միանշանակօրէն պարզ էր դառնում, որ հայկական կողմը քաղաքական աջակցութեան որեւէ ակնկալիք Գերմանիայից չէր կարող ունենալ, իսկ մարդասիրական օգնութեան հնարաւորութիւնը խիստ կասկածելի էր: Մինչդեռ Թուրքական կառավարութիւնը, օգտուելով

43 *Deutschland und Armenien 1914-1918...*, էջ 427-428:

44 Նոյն տեղում, էջ 428:

45 *Revidierte Ausgabe...*, թիւ 433 փաստաթուղթը:

© National Library of Armenia

Գերմանիայի թողտուութիւնից, շտապում էր կեղծ իրաւական հիմքեր ստեղծել Կարսի նահանգը իւրացնելու համար, այն է՝ հայերի վտարման եւ մահմեդականների ներգաղթի միջոցով նահանգի բնակչութեան փաստացի հաշուեկշիռը փոխելուց յետոյ անցկացնել հանրաքուէ՝ այն Օսմանեան կայսրութեանը միացնելու նպատակով: Օգոստոսի 19-ին Կարսի Հայոց ազգային խորհուրդը հանդէս եկաւ թուրքական կառավարութեան այդ գործելակերպի եւ Բրեստի պայմանագրի ոտնահարման դէմ գերմանական կառավարութեանն ուղղուած վճռական բողոքով, որի տեքստը նախ առաքուեց գեներալ ֆոն Կրեսին, իսկ վերջինս էլ այն օգոստոսի 21-ին ուղարկեց գերմանական արտգործնախարարութեանը: Այնտեղ մասնաւորապէս նշւում էր, որ Կարսի հայոց ազգային խորհուրդը, որն այդ շրջանի «բազմաչարչար հայ բնակչութեան» կամքն ու շահերն արտայայտող միակ լիազօր մարմինն էր, նահանգի հայ բնակչութեան անունից ամենավճռական կերպով բողոքում էր թուրքական կառավարութեան կողմից ձեռնարկուած հանրաքուէի դէմ եւ յայտարարում էր, որ Բրեստի պայմանագրի 4-րդ պարագրաֆը թուրքական կառավարութեան կողմից ամենակոպիտ կերպով ոտնահարուել էր, քանի որ մի կողմից թուրքական կառավարութիւնը մասամբ բռնի կերպով, մասամբ կովկասեան կառավարութիւնների վրայ ճնշման գործադրմամբ, հակառակ պայմանագրի, երկրամասը զաւթել էր եւ միւս կողմից ինքնագլուխ կերպով, առանց հաշուի առնելու պայմանագիրը համաստորագրող պետութիւններին, որոնք թուրքիայի հետ միասին յիշատակւում էին նոյն պարագրաֆում, միմիայն մահմեդական բնակչութեան շահերն էր արտայայտում, քանի որ Կարսի սանջակում մեծամասնութիւն կազմող հայ բնակիչները միւս քրիստոնեաների հետ միասին իրենց բնակավայրերից քշուել են եւ զրկուած են իրաւական ճանապարհով իրենց կամքն արտայայտելուց, չնայած թուրքական զօրքերի կողմից նուաճուած երկրամասից նրանց փախուստն իսկ բաւական էր՝ նրանց կամքի արտայայտումը պարզորոշ դարձնելու համար: «Այն իրաւունքների անունից,- նշուած էր Խորհրդի բողոքագրում,- որոնք Բրեստի պայմանագրի հիման վրայ յատկացուել են ամբողջ բնակչութեանը, այլ ոչ միայն նրա մահմեդական մասին, Կարսի հայոց ազգային խորհուրդը դիմում է Բրեստի պայմանագրում յիշատակուած՝ համաստորագրող տերութիւնների խղճին եւ խնդրում է նախ հեռացնել թուրքական զաւթիչ զօրքերը, ինչպէս նաեւ այն մահմեդական զանգուածները, որոնք հարեւան տարածքներից այնտեղ են տեղափոխուել թուրքական կողմնորոշման համար ձայների մեծամասնութիւն ապահովելու նպատակով, եւ երկրորդ, ստեղծել պայմաններ, որոնք քրիստոնեայ բնակչութեանը վերադարձի եւ իր հայրենիքում հաստատուելու հնարաւորութիւն կը տան, որպէսզի նրանք ի վիճակի լինեն, համաձայն նոյն պայմանագրի, անձամբ որոշել իրենց կառավարման ձեւը»[46]:

Այդ բողոքագիրը, բնականաբար, նոյնպէս դատապարտուած էր դառնալու «ձայն բարբառոյ յանապատի», առաւել եւս այն բանից յետոյ, երբ գերմանական կառավարութիւնը փաստացիօրէն հրաժարուել էր որեւէ պատասխանատուութիւն ստանձնել հայ ժողովրդի վիճակի առնչութեամբ: Մօտենում էր աշունը, եւ եթէ իրադրութիւնը շարունակէր նոյնը մնալ, ապա սովի ու սառնամանիքի դէմ անպաշտ-

46 *Deutschland und Armenien 1914-1918...*, էջ 429: Վերջում Կարսի հայոց ազգային խորհուրդը տեղեկացնում էր այդ առնչութեամբ շուտով մի մանրամասն, պատմական, աշխարհագրական եւ էթնոգրաֆիական տուեալներով յագեցած յուշագիր գերմանական կառավարութեանն ուղարկելու իր մտադրութեան մասին:

պան բազմահազար հայ փախստականներն այլեւս չէին կարողանայ գոյատեւել: Այս ծանր իրադրութիւնում Կոստանդնուպոլսում գտնուող հայկական պատուիրակութիւնը օգոստոսի վերջին դարձեալ հանդիպեց դեսպան Բեռնշտորֆին՝ նրան իր բողոքն արտայայտելով այն առնչութեամբ, որ վրացական հանրապետութիւնը դաշնակից պետութիւնների կողմից արդէն պէտք է ճանաչուէր, մինչդեռ Հայաստանի Հանրապետութիւնը՝ ոչ: Ինչպէս տեղեկացնում էր դեսպանը արտգործնախարարութեան պետքարտուղարին ուղղուած՝ օգոստոսի 28-ի իր հեռագրում, պատուիրակները նշել էին, որ եթէ Հայաստանը նոյն կերպ ճանաչում չգտնէր, ապա, այն, Ռուսաստանից միանգամայն կտրուած լինելով, ամբողջովին կ'ընկնէր Թուրքիայի տիրապետութեան տակ, եւ այդպիսով Գերմանիան, փոխանակ հայերին խոստացուած օգնութիւնը տրամադրելու, նրանց մահացու հարուած կը հասցնէր:

Հայ պատուիրակները դեսպանին նաեւ հարցրել էին, թէ արդեօք արդէն պէտք է վերադառնային, քանի որ համաժողով տեղի չէր ունենում, եւ վրացի պատուիրակները նոյնպէս վճռել էին վերադառնալ: Դեսպանը նրանց խորհուրդ է տալիս մի կարճ ժամանակ եւս մնալ, քանի որ, իբրեւ թէ, առաջիկայ օրերին պէտք է կայացուէր այս կամ այն ուղղուածութիւնն ունեցող մի վերջնական որոշում: Ուշագրաւ է, որ դեսպանը ստեղծուած իրադրութիւնում հայերի համար միակ ելքը, ինչպէս նախկինում, դարձեալ համարում էր Հայաստանի Հանրապետութիւնը Վրաստանին միացնելը: Հայ պատուիրակները, բաւական երկար ընդդիմանալով, եւ, ամենայն հաւանականութեամբ, միայն այն պայմանով, որ այդ միացումը ժամանակաւոր էր լինելու, ի վերջոյ համաձայնել էին: «Ընդհանուր առմամբ ես հայերին առկայ իրավիճակում քիչ մխիթարութիւն կարողացայ տալ,- գրում էր դեսպանը-: Նրանք որեւէ արժէք չեն տալիս փախստականների վերադարձին, քանի որ փաստացի իրադրութեանը տեղեակ են եւ այդ պատճառով ստուգապէս գիտեն, որ ոչ մի հայ չի վերադառնայ այնտեղ, որտեղ իշխում են թուրքերը, այնպէս, ինչպէս ոչ մի մահմեդական իրաւունք չի ունենայ մնալ Հայաստանի Հանրապետութիւնում, եթէ այն դառնայ իրականութիւն: Երկար-բարակ խօսելուց յետոյ մենք եկանք համաձայնութեան՝ Ձերդ Գերազանցութեանը հետեւեալ առաջարկը ներկայացնելու համար, որը հայերի վերջին յոյսն է: Վրաստանը մինչեւ այժմ դեռ չի ճանաչուել, այլ մենք միայն Ռուսաստանի համաձայնութիւնն ենք ձեռք բերել նրա ճանաչման համար: Վրաստանի սահմանները նոյնպէս դեռ ամրագրուած չեն: Այդ պատճառով կարելի է խորհել, որ մենք վրացիներին որոշ պայմաններ առաջադրենք, նախքան նրանք կը վայելեն իրենց տրուելիք արտակարգ արտօնութիւնները: Մենք հաւանաբար կարող ենք պահանջել, որ փոքրիկ, այսպէս կոչուած, Հայաստանի Հանրապետութիւնը ինչ-որ մի ժամանակաւոր ձեւով միացուի Վրաստանին: Հայերը դրան պատրաստ են, քանի որ որեւէ ուրիշ յոյս այլեւս չունեն: Թէ արդեօք վրացիները վերոնշեալ առաջարկին կը համաձայնե՞ն, ես այստեղից չեմ կարող դատել, քանի որ Վրաստանի՝ այստեղի ներկայացուցիչների շարքում մեծ կշիռ ունեցող ոչ մի անձնաւորութիւն չկայ: Այդ մասին միայն Զենկելին կարող է տեղեկութիւն տալ: Ես այստեղից նմանապէս քիչ կարող եմ կռահել, թէ Ռուսաստանը ինչպէս կը վերաբերուի այդ հարցին: Հայերն ինձ ասացին, որ Ռուսաստանը չի ուզում ճանաչել այժմեան Հայաստանի Հանրապետութիւնը, քանի որ դրանով միաժամանակ կը վաւերացուի Հայաստանի անդամահատումը: Դա, սակայն, ես բաւականաչափ հիմք չեմ համարում, քանի որ կարիք չկայ հայերի մնացորդը ոչնչացնել միայն մի սկզբունքի

© National Library of Armenia

պատճառով, որը չի կարող իրագործուել: Ինչ, վերջապէս, Թուրքերին է վերաբերում, ապա ես կարող եմ վկայակոչել իմ նախկին տեղեկութիւնները, ըստ որոնց այստեղի կառավարութիւնը բացառիկ նշանակութիւն է տալիս սահմանային կարգաւորումներին եւ Կովկասի մահմեդականների հետ իր կապերին, որոնց նա պարզապէս Թուրքեր է անուանում»[47]:

Յատկանշական է, որ Բեռնշտորֆը, որը մեծ դերակատարում էր ունեցել անցած ժամանակամիջոցում գերմանական կառավարութեանը հայանպաստ գործուն միջամտութիւններից ետ պահելու հարցում, հայ ժողովրդին օգնելու՝ Գերմանիայի հնարաւորութիւնները վերոնշեալով արդէն սպառուած էր համարում եւ խորհուրդ էր տալիս կառավարութեանը, թողնելով այդ եւ կովկասեան այլ հարցերում Թուրքիայի հետ ունեցած տարակարծութիւնները, Թուրքերի եւ Ադրբեջանի մահմեդականների հետ համաձայնութեան գալով՝ նախաձեռնել Բաքուի գրաւումը[48], քանի որ այլապէս Գերմանիան կը զրկուէր Բաքուի նաւթից եւ կարեւոր ճանապարհներից[49]:

Ինչեւէ, չնայած այն հետեւողական ջանքերին, որ գործադրում էին Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը եւ Թիֆլիսում Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ Ֆոն Կրեսը՝ խիստ ծանր դրութեան մէջ գտնուող հայերի համար Գերմանիայի աջակցութիւնն ապահովելու նպատակով, պաշտօնական Գերմանիան 1918 թ. օգոստոսին եւս նախընտրեց հետեւել այդ հարցում չէզոքութիւն պահպանելու եւ հնարաւորինս պատասխանատուութիւնն իրենից վանելու՝ իր աւանդական քաղաքականութեանը՝ լաւագոյն դէպքում հանդէս գալով միայն Բ. Դռանն ուղղուած ամուլ նախազգուշացումներով եւ յորդորներով. հանգամանք, որից հմտօրէն օգտւում էր Թուրքական կառավարութիւնը:

47 *Die Armenische Frage...*, էջ 576-577:

48 Բաքուի հետ կապուած՝ համալիր ռազմական գործողութիւնների ընթացքին իրազեկուելու համար տե՛ս **Մ. Ս. Կարապետեան**, *Հայաստանը 1912-1920 թուականներին*, էջ 241-246:

49 «Քանի որ անգլիացիները շարունակ ամրապնդւում են Բաքուում,-այդ առթիւ գրում էր նա,- ես համոզուած եմ, որ մենք շուտով, չնայած այն ամէնին, ինչ մինչեւ հիմա տեղի է ունեցել, ռազմական դրդապատճառներով պէտք է Թուրքիայի եւ Ադրբեջանի մահմեդականների հետ համաձայնութեան գանք՝ միասին Բաքուի վրայ յարձակուելու համար: Այլապէս մենք նաւթին չենք տիրանալ, իսկ ճանապարհը դէպի Պարսկաստան, Թուրքեստան եւ այլն կը փակուի»: Դեսպանը բոլոր դէպքերում ամենանպաստաւոր տարբերակը համարում էր այն, որ Գերմանիան ռուսական կառավարութիւնից Բաքուն գրաւելու մանդատ ձեռք բերէր՝ դա հիմնաւորելի համարելով նաեւ այն պատճառաբանութեամբ, որ Բաքուի խորհուրդը, իբրեւ թէ, ընկել էր անգլիացիների ազդեցութեան տակ եւ այլեւս չէր առաջնորդւում Մոսկուայի ցանկութիւններով: Ամէն դէպքում, ըստ նրա, Բաքուի գրաւումը յոյժ անհրաժեշտ էր, եւ նա կառավարութեանը կոչ էր անում հնարաւորինս արագ նշանակալից ռազմական ուժեր, առանձնապէս ծանր հրետանի տրամադրել գեներալ ֆոն Կրեսին, քանի որ մի հրանօթային մարտկոցով այդ հարցում ոչինչ հնարաւոր չէր անել (տե՛ս նոյն տեղում, էջ 577-578): Ինքնին հասկանալի է, որ Բեռնշտորֆի այս տեսակէտը նոյնպէս միանգամայն թուրքական շահերից էր բխում, եւ նա այդ առնչութեամբ պէտք է քաջալերուած լինէր նաեւ թուրքական կառավարութիւնից:

ՀԻՆ ԵԳԻՊՏԱԿԱՆ «ԲԱՂԱԴՐԵԱԼ ՄԻՋՆՈՐԴԱՀՈՐՈՒԱԾ ԼԱՔԵՐԸ» ԿԱՐԵԼԻ Է ԱՆՈՒԱՆԵԼ «ԿԱՅՍԵՐԱԿԱՆ»

Քրիստիան դը Վարդաւան
Եգիպտագիտութեան հայկական կենտրոն (ԵՊՀ)

Փարաւոնեան ժամանակներում «սեւ լաքի» առաջին կիրառութիւնն, ըստ Թէյլորի[1], կապուած է եղել սեւ հիմնաշերտ (ֆոն) ունեցող սարկոֆագների ի յայտ գալու հետ՝ Հաթշեփսուիթի գահակալման (մօտ. 1473-1458) եօթներորդ տարուայ սկզբին (Նոր Թագաւորութեան ժամանակաշրջանի սկիզբ): Սերփիքոն եւ Ուայթը[2], մի շարք լաքապատ առարկաներ ուսումնասիրելուց յետոյ, գտնում են, որ «դեղին լաքը» նոյնպէս սկսել է կիրառուել փարաւոնական գահակալման այդ նոյն տարում: Կարելի է ենթադրել, որ այս լաքերի ի յայտ գալու եւ Հաթշեփսուիթի՝ դէպի Փունտի երկիր (Արեւելեան Աֆրիկա) կատարած արշաւանքների միջեւ գոյութիւն ունի անմիջական կապ, մանաւանդ, որ Դէյր-էլ-Բահարիի նրա տաճարի բարձրաքանդակները պատկերում են sntr ծառերը[3] եւ դրանց խէժը Եգիպտոս բերելու տեսարաններ: Մեզ արդէն յայտնի է, որ այս խէժը ոչ միայն հին եգիպտական լաքերի բաղադրիչներից մէկն է, այլեւ բաղկացած է (գոնէ Ամարնայում) Pistacia (մաստիկենի) ծառի տեսակներից ստացուող բուսախէժից, ինչպիսիք են, օրինակ P. lentiscusը (սովորաբար յայտնի է «մաստիկա» անունով) կամ, ինչն աւելի հաւանական է, P. atlantica-ն (Ատլասի մաստիկենի[4]):

Չնայած դրան, այնուամենայնիւ, աւելի հաւանական է թւում, որ «բաղադրեալ լաքերի»[5] պատրաստման արուեստը յայտնի է դարձել եգիպտացիներին դէպի Ասիա կատարած զաւթողական արշաւանքների ժամանակ: Իրօք, այս արուեստը կարող էր յայտնագործուած լինել Պաղեստինում, ուր խէժ արտադրող Pistacia ծառի բազմազան տարատեսակներ են աճում, կամ նոյնիսկ աւելի հեռու՝ Միջագետքում, ուր մի շարք տեխնոլոգիական առաջընթացներ կային այս ասպարէզում: Չի բացառւում նաեւ, որ այն պահից ի վեր, երբ հին եգիպտացիները իւրացրին եռաբաղադրիչ լաքերի պատրաստման տեխնիկան, Փունտից կամ մէկ այլ վայրից բերուած sntr խէժը սկսեց օգտագործուել ոչ միայն որպէս խունկ կամ խնկի բաղադրիչ՝ «խնկարկման» ծէսի համար, այլ նաեւ «լաքեր» պատրաստելու համար: Այս ենթադրութիւնը թէեւ ապացուցման կարիք ունի, սակայն արդէն իսկ նշենք, որ ճշգրիտ համընկնում է Հաթշեփսուիթի գահակալման օրօք այս լաքերի ի յայտ գալու պատմական փաստի հետ:

Միւս կողմից, ըստ Լուկասի հետազոտութիւնների, այս նոյն ժամանակաշրջանի հակառակ ծայրին, այսինքն՝ Նոր Թագաւորութեան աւարտին (1069 Ք. ա.) եւ

1 **Taylor** 2001.

2 **Serpico and White** 2001.

3 Արդեօք այս Sntr ծառերը նոյն Pistacia ծառերն են՝ մէկ այլ չլուծուած հարց է, ուստի այլ տեսակներ, ինչպէս՝ Boswellia spp. եւ Commiphora spp. նոյնպէս կարող են թեկնածու համարուել:

4 **Serpico and White** 2001.

5 Հին լաքերի «բաղադրեալ» լինելու մասին տե՛ս **C. de Vartavan,** "Is '*mny*' the Solvent in Ancient Egyptian Varnish?" (*AEC-Newsletter* 3, May 01, 2008, http://www.armenian-egyptology-centre.com) կամ **C. de Vartavan,** *The Principle and Nature of Ancient Egyptian Complex Imperial Varnishes.* Advances in Egyptology 1, 2009, շուտով:

© National Library of Armenia